2024, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (660)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Տոն ծննդյան Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի

Վեհափա՛ռ Տեր,

Ի խորոց սրտի շնորհավորում ենք Ձերդ Սրբության ծննդյան տոնը:

Աշխարհաքաղաքական գործընթացների այս բարդ ու անկանխատեսելի ժամանակներում, երբ մեր հայրենիքը գոյութենական տագնապահարույց անորոշության մեջ է, Ամենայն Հայոց Կաթողիկոսի աստվածօրհնյալ առաքելությունն իր հոգեփրկչական ու եկեղեցաշինական ուխտյալ և անձանձիր ճանապարհին պարտադրված է ստանձնել նաև հայրենապահպանության և ազգափրկության անսխալական առաջնորդության բարձրագույն պատասխանատվություն: Աստվածպարգև բացառիկ իմաստնություն և կամք է անհրաժեշտ այսօր՝ չգոյության տանող անկումների խորխորատներից հայրենիքի գոյութենական ուղեծիրը վերագտնելու, ժողովրդին վեր բարձրացնելու և կյանքի առաջնորդելու: Որպես քաջախորհուրդ և կամային Հովվապետ՝ Դուք ի զորու եք ամենագութ Աստծու աջակցությամբ առաջնորդելու այդ ճակատագրական երթը, փրկելու և դարձի բերելու կործանարար հորձանուտներին կամա-ակամա մատնված մեր ժողովրդին, հաշտեցնելու և հավաքական ուժ դարձնելու գաղափարական-ընկերային բևեռացումների տարհատված հայ ազգին՝ հովվելով ճշմարտության և բարօրության լուսավորչահաստատ ճանապարհով:

Ձերդ Վեհափառության արթնամտությունը, անսպառ եռանդն ու անսակարկ նվիրումը տարիներ շարունակ ներդրել եք մեր փլատակված և վտանգված եկեղեցիների ու վանքերի վերաշինության տիրաշնորհ գործում և նույն ստեղծագործ ոգով ու շինարար մտքով ի զորու եք բարենորոգելու մեր փլատակվող ազգային ինքնության բարոյապատկերն ու Հայաստան աշխարհի բերդ-ամրոցը: Ձերդ Պայծառափայլության բարեպաշտությունն ու անհոգնաբեկ գործունեությունը դասական խորհրդապատկեր են, թե ինչպես պետք է ամուր և շեն պահել երկիր հայրենին, ինչպես մաքրագործել հայ հոգին՝ ազատելով նրան ներքին ու արտաքին անարդարություններից լեռնացած մրուրից, վերակերտելով քրիստոնյա հոգեբանությամբ:

Որպես Ամենայն Հայոց հոգևոր առաջնորդ և համազգային գործիչ՝ Ձեր անխոնջ գործունեությամբ, անզիջում կանոնապահությամբ տիպար եք ծառայում համազգային նպատակների իրագործման ճանապարհին՝ հանուն հայրենիքի անսասան ու բարգավաճ մշտագոյության: Դուք նաև հայ ոգու ամրության, հեռատես խոհեմության, հավասարակշիռ և արժանապատիվ համբերության խորհրդանիշ եք: Թող Ձեր վեհաշուք ներկայությունը փառազարդի Հայոց Եկեղեցու խորանները, թող Բարձրյալը պահպանի Ձեր շնորհները ու առաքինությունները և բազմապատկի Ձեր կարողությունները: Ձերդ Սրբությանն արևշատություն և քաջառողջություն և աստվածային զորակցություն լուսատենչ ու վճռորոշ առաքելության ընթացքին, Ձեր գահակալությունը հայրենիքին և Եկեղեցուն ամբողջանվեր սպասավորեցնելու աստվածահաճո ճանապարհին:

Որդիական սիրով և խոնարհումով՝
«Քրիստոնյա Հայաստանի»
խմբագրություն

Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Օգոստոսի 18-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Սուրբ Մարիամ Աստվածածնի վերափոխման տոնը:

Տոնական օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանությունը, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորությամբ, Սուրբ Գայանե վանքում մասնակցեց պատարագի սրբազան արարողությանը: Պատարագիչն էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» կրթական կենտրոնի տնօրեն Տ. Վահան եպս. Հովհաննիսյանը:

Ներկայացնելով տոնի խորհուրդը՝ պատարագիչ սրբազանը մասնավորապես նշեց. «Աստվածամայրը մեր Եկեղեցու ու ժողովրդի համար կարևոր դերակատարում ունի, որն արտացոլվում է եկեղեցու շարականներում և պաշտամունքի մեջ. մեր խորանները զարդարված են Աստվածամոր պատկերով»: Այս առիթով պատարագիչ սրբազանն ընդգծեց, որ Աստվածամայրը, լինելով սովորական մարդ, գիտակցելով մարդկային կյանքում առկա դժվարությունները, առանց վարանելու, խիզախորեն անսաց հրեշտակապետի խոսքին՝ դառնալով մարմնացյալ Աստծու մայրը. «Աստվածամայրը, իր կամքը հնազանդեցնելով Աստծու կամքին, նախևառաջ առիթ ու միջոց եղավ Աստծու փրկագործության ծրագրի իրագործման: Սրանով նաև մեզ կարևոր դաս տվեց, որ անկախ կյանքում առկա իրողությունների՝ մենք պետք է հնազանդվենք Տիրոջ կամքին»:

Վերջում Վահան սրբազանը հայցեց Աստածամոր բարեխոսությունը, որ Աստված զորացնի մեր հավատքը և յուրաքանչյուրիս մեջ արթնացնի նվիրումի ու քաջության ոգին:

Սուրբ պատարագի ավարտից հետո եկեղեցական թափորը Սուրբ Գայանե վանքից ուղղվեց դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Տրդատի բաց խորան, որտեղ հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ կատարվեց Խաղողօրհնեքի հանդիսավոր կարգը: Օրհնված խաղողի ողկույզները բաժանվեցին հավատավոր ժողովրդին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի ուխտավորներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն օգոստոսի 22-ին ընդունեց ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի ուխտավորներին՝ ուղեկցությամբ Նյու Յորքի Սրբոց Նահատակաց եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Աբրահամ քհն. Մալխասյանի:

Իր օրհնությունը բաշխելով ուխտավորներին՝ Հայոց Հայրապետը կարևոր նկատեց աշխարհասփյուռ հայորդիների կապը հայրենիքի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, ինչը լավագույն առիթ է հոգևոր նորոգության և հայրենասիրական զգացումների զորացման:

Նորին Սրբությունը պատգամեց նաև ներկաներին հավատքով զորացած վերադառնալ իրենց համայնքները և շարունակել հայրենանպաստ գործունեությունը՝ նախաձախնդրորեն ներգրավվելով ազգային-եկեղեցական կյանքում:

Լրագրողների հավատարմագրում

Այսն թվականի սեպտեմբերի 28-ին և 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի կունենան սրբալույս մյուռոնի օրհնության և Մայր տաճարի վերաօծման արարողությունները:

Մայր Աթոռը մեծապես կարևորում է այս սրբազան արարողությունների լուսաբանման գործում զանգվածային լրատվամիջոցների մասնակցությունը:

Լրատվամիջոցների ներկայացուցիչների աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար Մայր Աթոռի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանում կգործի մամուլի կենտրոն:

Հավատարմագրվելու համար ՁԼՄ-ների ներկայացուցիչները (լրագրող, օպերատոր, լուսանկարիչ) պետք է Մայր Աթոռի տեղեկատվական համակարգի mothersee@etchmiadzin.am էլ. փոստին առաքեն՝

1. նամակ-երաշխավորագիր՝ լրատվամիջոցի տնօրենի կամ գլխավոր խմբագրի ստորագրությամբ և կնիքով,
2. անձը հաստատող փաստաթղթի օրինակ,
3. մեկ թվային լուսանկար (3×4 սմ չափերի):

Լրացուցիչ հարցերի համար կարող եք կապվել Տեղեկատվական համակարգ (+374 10) 51-71-72 հեռախոսահամարով:

Տեղի ունեցավ Մայր տաճարի վերաօծման, մյուռոնօրհնության և հարակից միջոցառումների կազմակերպման համակարգող հանձնախմբի հերթական նիստը

Օգոստոսի 29-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Մայր Աթոռում գումարվեց Մայր տաճարի վերաօծման, մյուռոնօրհնության արարողությունների շրջանակներում ստեղծված համակարգող հանձնախմբի հերթական նիստը:

Հիշյալ արարողությունների աշխատանքները պատշաճորեն կազմակերպելու նպատակով Նորին Սրբության տնօրինությամբ տակավին նախորդ տարվանից ստեղծվել է համակարգող հանձնախումբ, որն ատենապետում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը:

Համակարգող հանձնախմբի շրջանակներում գործում է 5 ենթահանձնախումբ՝ արարողակարգային, ծիսական, տեղեկատվական, տեխնիկական ապահովման, հրատարակությունների և միջոցառումների կազմակերպման, որոնք նախապես կազմված գործողությունների ծրագրով իրականացնում են սեպտեմբերյան միջոցառումների համապատասխան կազմակերպչական աշխատանքները:

Համակարգող հանձնախումբը կազմել է արարողությունների ծրագիրը, ըստ որի՝ հիմնական արարողությունները տեղի են ունենալու հետևյալ ժամանակացույցով.

— սեպտեմբերի 28-ին՝ ժամը 17:00-ին, մյուռոնօրհնության արարողություն Սուրբ Տրդատի բաց խորանում,

— սեպտեմբերի 29-ին՝ ժամը 10:30-ին, Մայր տաճարի վերաօծման արարողություն:

Հիմնական միջոցառումները լայնորեն կլուսաբանեն թե՛ տեղական և թե՛ միջազգային լրատվամիջոցները: Մայր տաճարի վերաօծման և մյուռոնօրհնեքի արարողությունները հեռարձակվելու են ուղիղ եթերով:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ

Օգոստոսի 31-ին՝ 2024—2025 թթ. ուսումնական նոր տարեշրջանին ընդառաջ, Սուրբ Գայանե վանքում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ կրթության մշակների օրհնության կարգը:

Արարողությանը ներկա էին կրթական կառույցների ներկայացուցիչներ, բուհերի ռեկտորներ, հանրակրթական դպրոցների տնօրեններ և մանկավարժներ:

Օրհնության կարգի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական

օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց կրթության ոլորտի երախտավորներին՝ նշելով, որ առանձնակի խորհուրդ ու նշանակություն ունի կրթության մշակների ներկայությունը հայ ժողովրդի հոգևոր կենտրոնում, որտեղից սկիզբ են առել հայալեզու ուսուցումն ու կրթությունը:

«Գիտությունն ու մարդկային հնարավորությունները մեր օրերում արագ են զարգանում, և այսօր առավել, քան երբևէ կարևորվում են ուսումն ու կրթությունը: Բոլոր ժամանակներում, սակայն, գլխավորը մարդկային ոգին ու նկարագիրը կրթելն է, այն ճշմարտության և բարու մեջ հաստատելը: Արդարև, գիտելիքն արարելու ուժ ու զորություն է, բայց այն բարիք է դառնում, երբ հաստատված է հոգևոր արժեքների ու բարոյական հիմքերի վրա»,— ասաց Նորին Սրբությունը՝ կարևորելով կրթության մշակների առաքելությունը ազգի զավակներին ոչ միայն ժամանակին համահունչ գիտելիք ու փորձառություն փոխանցելու, այլև նրանց միտքը վարժեցնելու՝ խորհելու արդարն ու ճշմարիտը և գործելու բարին, սովորեցնելու ճանաչել ու սիրել հայրենիքը, մեր Սուրբ Եկեղեցին, կրթելու գիտակից, պատասխանատու անհատների և օրինահարգ քաղաքացիների:

Իր խոսքում Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ համաշխարհայնացման և արժեհամակարգի նենգափոխման մերօրյա հորձանուտում անտեսվում և հետ են մղվում իրական արժեքները՝ ազգերին ու հասարակություններին կանգնեցնելով հակասություններ և գոյաբանական խնդիրների առջև. «Ազգային մեր կյանքում նման մարտահրավերները հաղթահարելի են մնայուն արժեքներ և ամուր ինքնություն, հայրենասիրության ու ազգանվիրումի ոգի ունեցող անհատների կրթելու դեպքում, որոնք ձգտում են նոր գիտելիքների և իմացության և միևնույն ժամանակ քաջատեղյակ են իրենց պատմությանն ու հայրերի ժառանգությանը»:

Անդրադառնալով մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում Հայ Եկեղեցու առաքելությանը՝ Հայոց Հայրապետը փաստեց, որ անկախ պետականության հաստատումից ի վեր Եկեղեցին աջակցել է հայրենի պետության կրթադաստիարակչական գործունեությանը և նպաստել ազգային նկարագրով, հայեցի դաստիարակությամբ և հարուստ գիտելիքներով սերնդի կրթմանը:

«Այս կարևոր նպատակին էր ուղղված նաև «Հայ Եկեղեցու պատմություն» առարկան, որն այլևս չի դասավանդվելու: Ցավ ի սիրտ ենք արձանագրում, որ այսօր ամեն ջանք գործադրվում է հայ դպրոցի հիմնադիր Հայոց Եկեղեցուն դուրս մղելու նույն դպրոցից, փորձ է արվում արժեզրկել հայ ժողովրդի կյանքում Ազգային Եկեղեցու հոգեփրկչական, ինչպես նաև ազգային արժեքների և ինքնության պահպանման գործում իրականացրած բացառիկ առաքելությունը՝ հանրակրթական նոր դասագրքերում այլափոխված և աղճատված ներկայացնելով նրա պատմությունը:

Պատմությունը պետք է վերանայել սխալները ճանաչելու և ուղղելու նպատակով, իսկ մեր երկրի ու հայրենի պետականության ապահով ներկան և մանավանդ ապագան կարող ենք կերտել՝ առ Աստված մեր հավատին և ավանդներին ու դրանցով ներշաղախված մեր ազգային նկարագրին հարազատ ու հավատարիմ մնալով: Սա է մեր պատմության մատուցած գլխավոր դասը, որը երբեք չպիտի մոռանանք»,— նշեց Հայոց Հովվապետը՝ պատգամելով ուսուցիչներին սիրով, նախանձնախնդրությամբ ու հավատով նվիրվել իրականություն դարձնելու կենսունակ ու արդար հասարակություն և ինքնիշխան ու հզոր պետություն կերտելու ազգային մեր երազանքը:

Վերջում Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով կրթագիտական առաքելության նվիրյալների գովարժան ծառայությունը, հայցեց Երկնավորից անսպառ եռանդ, ուժ ու կորով, օգտաշատ ծրագրեր ու համարձակ իրագործումներ՝ ի խնդիր ազգի արժանավոր

սերունդների կրթության և գիտության ասպարեզում նորանոր ձեռքբերումների:

Հավարտ օրհնության կարգի, ի պատիվ հրավիրյալների, տեղի ունեցավ ընդունելություն:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

ԴԱՍԸ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ: ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Վազգեն Ա Կաթողիկոսի խոհերից

Մահվան 30-րդ տարելիցի առթիվ

«Պահեր կան ժողովրդի մը կյանքի մեջ, եկեղեցիի մը պատմության մեջ, երբ պետք է անտեսել կողմնակի հարցերը և պարագաները, պետք է վեր կանգնիլ բոլոր անցողական հարցերեն և միասնաբար գործել՝ մեր ամբողջ հավատացյալ Ժողովուրդի առջև ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի անգամ մը ևս ցույց տալու, որ մենք մեկ Եկեղեցի ենք, մեկ ազգ և նույն հիմնական իտեալները կհետապնդենք»:

«Թույլ տվեք հավատալ, որ ռուս ժողովրդի խիղճը չի թողնի, որ հայերը ընկղմվեն հուսահատության մեջ»:

«Ազգ մը չապրի միայն իր նյութական բարիքներով, չապրի միայն իր մտքի և զգացումի արտահայտություններով, ինչպես են արվեստներն ու գրականությունը, չապրի միայն հանճարեղ անհատներու գործերով, այլ կապրի նաև պատվի և արժանապատվության զգացումներով, իր «մենք»-ի գիտակցությամբ և զոհաբերության ոգիով, իր ազատ և հպարտ ապրելու կամքով, մեկ խոսքով՝ իր բարոյական նկարագրով»:

«Անհեռատեսորեն ընդվզել Ռուսաստանի դեմ, դուրս գալ ափերից և ընկնել վնասակար ծայրահեղությունների մեջ՝ նշանակում է Հայաստանը սկուտեղի վրա մատուցել թշնամուն»:

«Մարդ անհատի գերագույն զարդը, գերագույն պարծանքը բարոյական գիտակցության հրամայականն է, որով իր հոգուց արմատախիլ պետք է անի անցյալից մնացած արատները, եսակենտրոն մղումները»:

«Ինչ որ կատարվի, հանուն պարտականության կկատարվի: Մինչդեռ լոկ պարտականության մը չոր գիտակցությունը երբեք ստեղծագործ ուժ մը չի ներկայացներ: Պետք ունինք շարժումի, եռանդի, ոգևորության, սիրո և նույնիսկ կիրքի: Քանի որ լավ գործածված կիրքը դեպի ստեղծագործություն տանող մղիչ ուժ կարող է դառնալ»:

ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

Հուշեր և խորհրդածություններ Վազգեն Առաջին Կաթողիկոսի մասին

Վեհափառ Հայրապետին կեանքը սկիզբէն մինչև վերջ եղաւ վճիտ այն հայելին, ուրկէ ցոլացին սոսկ բարութիւն, ճշմարտութիւն և գեղեցկութիւն: Իր կեանքը հոմանիշ եղաւ մեծութեան և ազնուագոյն տիպարի: Իր մէջ մարդիկ տեսան բուն վեհութիւնը, միւռոնաբոյր շնորհը, մեր Եկեղեցիին հաւատքը, հայրենասիրութիւնը, լաւատեսութիւնը, կորովը և ապրելու ու ծառայելու կոչման գիտակցութիւնը.... Վեհափառը իր քարոզներով ու ճառերով կառինքնէր իր ունկնդիրները: Մեծ հաճոյք էր զինք լսել և վայելել իր խոսքին ջերմութիւնը և իր անձին հաղորդականութիւնը: Իրմով փառաւորուեցաւ Ս. Աթոռը, և իր անձին հմայքին ու գործունէութեան շնորհիւ Սփիւռքի հայութիւնը կապուեցաւ Ս. Էջմիածնին:

Եղիշէ արքեպիսկոպոս Կիզիրեան

Վաճելի զրուցակից էր Վազգէն Վեհափառը և կախորժէր իր անցեալէն դրուագներ պատմել.... Հարցում մը ուղղեցի. *«Վեհափառ Տէր, «Վազգէն» յատուկ անունը այնքան ալ ընդհանրացած անուն մը չէր, ոչ աշխարհականաց և մանաւանդ հոգևորականաց համար: Մազլումեան Կարապետ սրբազանը ո՞ւրկէ գտաւ այդ անունը»*:

«Լաւ հարցում է»,— ըսաւ Վեհը ու հետևեալ վկայութիւնը տուաւ:

«Վանի ինքնապաշտպանութեան հայդուկներէն էր Վազգէն անունով քաջարի երիտասարդ մը: Հերոսամարտի մը ընթացքին սպանուեցաւ: Թուրքերը հերոս երիտասարդին դիակը տունէ տուն պտըտցուցին՝ գտնելու համար անոր ընտանիքը՝ պատժելու կամ վնասելու միտումով: Երբ Վազգէնի մայրը, շրջապատուած տնեցիներով, կը տեսնէ իր անշնչացած որդիին դիակը, կը յայտնէ թուրք զինուորներուն, թէ չի ճանչնար անոր ով ըլլալը»: Ու յուզուեցաւ Վեհափառը: Պահ մը մնաց լուռ, ապա շարունակեց. *«Գիտէք, որքան քաջութիւն պէտք էր մօր մը համար այդպիսի կեցուածք մը ցուցաբերելու: Այդ անկրկնելի զոհաբերութիւնը ըրաւ փրկելու համար ընտանիքի միւս անդամները....»:*

Աւագ արքեպիսկոպոս Ասատուրեան

Իր աշխարհային կեանքի վերջին օրերուն Տ. Տ. Վազգէն Ա Հայրապետը Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահ Լևոն Տէր-Պետրոսեանին և Ազգային Ժողովին կողմէ արժանացաւ բացառիկ պատիվի: Ան իր բազմամեայ ծառայութիւններուն և իր հարազատ ժողովուրդին հանդէպ տածած յաւերժական սիրոյն համար անուանուեցաւ «Հայաստանի Ազգային Հերոս».... Գրեթէ քառասուն տարի Նորին սրբութիւնը Եկեղեցւոյ խորհրդանիշը հանդիսացաւ աշխարհի չորս ծագերուն ցրուած միլիոնաւոր քրիստոնեայ հայորդիներուն, և յաչս մեր ժողովուրդին ճառագայթեց զերթ յոյսի բարակ նշոյլ, որ կապեց մեզ մեր քաղաքակրթութեան արմատներուն, երբ մենք մեր ազգային ճակատագրին տէրը չէինք:

Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեան

....Մեծերը շատ էին՝ Ավետիք Իսահակյան և Մարտիրոս Սարյան, Արամ Խաչատրյան և Սուրեն Քոչարյան, Վիկտոր Համբարձումյան և Հովսեփ Օրբելի, Հովհաննես Բաղրամյան, Գառզու, Վիլյամ Սարոյան, Կոստան Զարյան.... Բայց կա մեկը, որ առանձնանում է այս լուսարձակ պատկերասրահում, ինչպես Թորոս Ռոսլինի ձեռքով մանրանկարած սրբապատկերը կառանձնանար շրջակա դիմանկարների մեջ: Դա Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ն է, մեր Վեհափառը, որը բոլորովին նոր երանգ, նոր գույն է բերում ոչ միայն իմ, այլև ողջ Հայաստանի, մեր ողջ ժողովրդի կյանքում....

Վազգեն Վեհափառի հոգենորոգ շունչը, նրա էությունից ճառագայթող աուրան ակամա իր ծիրի մեջ էր առնում յուրաքանչյուրին, պեղում, արևերես էր հանում խորքերում եղած բարձրն ու լուսավորը, անորոշն ու անըմբռնելին: Նա իր գոյությամբ սրբացնում էր ողջ մթնոլորտը....

Սիլվա Կապուտիկյան

Վազգէն Վեհափառի հայրենասիրական բարձր զգացումների դրսևորումը կարելի է համարել նաև այն, որ դեռևս խորհրդային դժուարին տարիներին, երկար և անաղմուկ բանակցութիւններու շնորհիւ նա կարողացաւ հայրենիքի հողի վրայ բարձրացնել Հայոց Մեծ եղեռնի նահատակներին նուիրուած առաջին յուշարձանը: Այնուհետև մեծ եղաւ նաև նրա ներդրումը Ծիծեռնակաբերդի և Սարդարապատի յուշահամալիրների կառուցման պետական ծրագրերում:

Յակոբ արքեպիսկոպոս Գըլընճեան

....Իրավամբ Աստծո ընտրյալն էր և իր սրբագործված վեհությամբ բարձրագույն արժեքների անկրկնելի կրողը կմնա յուրաքանչյուր հայի և ամեն մի հավատացյալի հիշողության մեջ.... Վեհափառը սրբություն էր, վեհ էր ու փառավոր, Վեհափառը երկրիս վրա Աստծո ներկայացուցիչն էր ոչ թե խոսքերով, ոչ թե ի պաշտոնե, այլ բոլոր այն արժեքներով, որոնք ինքը կրում էր իր ճառագայթումներով, որոնք սփռում էր իր շուրջը, և որոնցով լուսավորվում էին իր հետ շփվողները: Եթե քեզ համար նույնիսկ մեկ անգամ եղել է այդ շփումը, այդ հանդիպումը, ուրեմն դրա ազդեցությունը, դրա տպավորությունը, դրա զգացողությունը անընդհատ քեզ հետ են....

Գագիկ Հարությունյան

Վազգեն Առաջին Վեհափառի գործունեության մեջ, այդուհանդերձ, կցանկանայի առանձնացնել երկու հատկանիշ, որոնք լավագույնս են բնութագրում նրան:

Առաջին. նա շինարար կաթողիկոս էր, որը շրջադարձային եղավ մեր ճարտարապետական հիասքանչ կոթողները վերականգնելու և պահպանելու տեսակետից....

Երկրորդ. Հայոց Հայրապետը իր իմաստությամբ ժողովրդին է ներկայանում նաև որպես մտավորական և գիտական գործիչ: Դրա խոսուն վկայությունն է այն իրողությունը, որ Վազգեն Առաջինն իր ստեղծագործական 60 տարիների ընթացքում հեղինակել է մոտ երկու հարյուր տարբեր բնույթի գիտական աշխատություններ: Նրա գրչին են պատկանում նաև հարյուրավոր կոնդակներ, որոնք փաստարկված ու հիմնավորված են գիտականությանը վայել դրույթներով:

Վազգեն Առաջինի գիտական ներդրումն այնքան ակնառու և ուրույն էր, որ Հայաստանի Հանրապետության Գիտությունների ակադեմիան, բարձր գնահատելով նրա գիտական վաստակը, նրան միաձայն ընտրեց ակադեմիայի պատվավոր անդամ: Եվ դա ձևական բնույթ չի կրել: Վեհափառ Հայրապետը գործունյա մասնակից էր ակադեմիական աշխատանքների.... Վազգեն Առաջին Վեհափառի մեծ գիտելիքները և բարձր կուլտուրան նրան մեծ ճանաչում բերեցին նաև Հայաստանից դուրս: Նա մեծ հեղինակություն էր վայելում արտասահմանյան ինչպես կրոնական, այնպես էլ աշխարհիկ շրջանակներում.... Այդ կապակցությամբ կցանկանայի բերել մեկ օրինակ: Հայաստանում էին գտնվում Խորհրդային Միության մարշալներ Հովհաննես Բաղրամյանը և Դմիտրի Ուստինովը, որը Խորհրդային Միության պաշտպանության նախարարն էր: Ես նրանց ուղեկցեցի Էջմիածին՝ Վեհափառի մոտ: Տեղի ունեցավ շատ հետաքրքիր զրույց: Հյուրերի վրա մեծ տպավորություն էին թողել Վեհափառի քննախույզ միտքը և հարցերը մեկնաբանելու նրա յուրօրինակ տրամաբանությունը: Երբ վերադառնում էինք Երևան և ճանապարհին մտքեր փոխանակում, մարշալ Ուստինովը, որը չափազանց տպավորված էր Հայոց կաթողիկոսով, նրա մասին ասաց հետևյալը. *«Հայոց նշանավոր հուշարձաններից հետո տեսա մի նոր կենդանի հուշարձան»*....

Տարիների հեռվից ավելի պայծառ են երևում նրա՝ այդ իմաստուն գործչի անձը և կատարած ազգանվեր գործունեությունը:

Ֆադեյ Սարգսյան

Տարիներ էին անցնում, ցավոք, ծերանում էր Վեհափառը: Տեսնում, զգում էի, թե ինչքան ուսանելի բան կա Վեհափառի կյանքի, կեցվածքի մեջ....

Մի անգամ Ս. Էջմիածնում հանդիպելիս նա հրավիրեց ինձ Վեհարան և անձամբ ցույց տվեց ադամանդներով ընդելուզված ոսկե խաչը և հայոց այբուբենը, որը հավաքված էր ավելի քան մեկ մետրանոց օնիքս ողորկ քարի վրա: Այս հիասքանչ ստեղծագործությունները զետեղված էին մեծ, չիրկիզվող պահարանների մեջ: Նա տեսնելով, որ ես ապշած և լուռ նայում եմ իմ անհասկանալի հայացքով, ասաց. *«Այս բոլորը Հայոց կաթողիկոսի նվերն է իր ժողովրդին»: «Վեհափառ,*— ասացի ես,— *երևի այս հարստությունը հավաքված է եղել Ձեր կաթողիկոսության ժամանակաշրջանում, և ինչ հիանալի մտքեր են այս հրաշագործ աշխատանքները.... Քանի որ Եկեղեցին մեր պետականությունից անջատ չէ, ապա Հայաստանի զինանշանն էլ այբուբենի և խաչի կողքին պիտի հաստատվի»*: Որոշ ժամանակ անց այն էլ գրավեց իր տեղը Վեհարանում:

Տեսնելով, որ այս ստեղծվածքները լուսավորվում են էլեկտրական թույլ աղբյուրի լույսով, խնդրեցի, որ թույլ տա՝ այդ լույսի աղբյուրը փոխարինեմ հատուկ լույսի աղբյուրով: Ես այն նախ լուսավորեցի քարի հետևի մասից, որտեղից երևում էին օնիքսի «երակները»: Դիմացից նույնպես հատուկ լուսային աղբյուր դրեցի: Իմ ընկալումով հիանալի էր ստացվել, ամեն ինչ շողում էր, ադամանդները ասես դարձել էին փոքր արևներ: Վեհափառին հրավիրեցի վերև, որ տեսնի իմ «ստեղծագործությունը»: Երբ լուսավորեցի այն, Վեհափառը բարձրաձայն գոչեց. *«Այս ի՞նչ ես արել, անջատի՛ր և հավաքի՛ր այս ամենը, սա կնմանվի ոսկու վաճառատանը լուսավորված ցուցապահարանի: Այստեղ պիտի հնչեն այբուբենը և խաչը, ոչ թե ոսկին ու ադամանդը,*— բարձրաձայն վանկարկելով՝ նեղացած հեռացավ: Ես ընկա մտատանջության մեջ, հետո հասկացա, որ, ինչպես միշտ, Վեհափառը ճիշտ էր....

Ծովակ Ավագյան

Նյութերը՝ «Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց» գրքից, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005

ՔՐԻՍՏՈՆՅԱ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Հույսը և հուսահատությունը,
կամ՝ քրիստոնյան չպիտի պարագայաբար Աստծուն վստահի

Հարցազրույց Տեր Փառեն քհն. Առաքելյանի հետ

– Տե՛ր Հայր, քրիստոնեական տեսանկյունից ի՞նչ է հույսը, և Սուրբ Գրքում որքա՞ն է կարևորվում հույսի ապրումը:

– Եթե համառոտ ձևակերպենք, հույսը Հիսուս Քրիստոսն է և առանցքային է Աստվածաշնչի մեջ: Պողոս առաքյալի՝ Տիմոթեոսին գրված թուղթն սկսվում է հենց այդ գաղափարով. «Պողոսը՝ Հիսուս Քրիստոսի առաքյալը, մեր փրկիչ Աստծու և մեր հույսը եղող Հիսուս Քրիստոսի հրամանով....» (Ա Տիմ. Ա:1): Ուրիշ ցայտուն օրինակներ էլ կան Աստվածաշնչի մեջ. Դավիթ սաղմոսերգուն հետևյալն է ասում. «Քանզի դու ես իմ համբերությունը, Տեր, Տեր, իմ հույսն ես մանկությունիցս ի վեր» (Սաղմոս Դ:5):

Եկեղեցու հայրերը ևս շատ են կարևորել հույսը մարդու կյանքում, և կցանկանամ մի քանի հայրերի խոսքը հույսի վերաբերյալ նույնպես հիշատակել: Ս. Մեսրոպ Մաշտոց վարդապետը իր ապաշխարության շարականներից մեկի մեջ գրում է. «Յոյս իմ ես Դու, Տէր, Քաւի՛չ յանցանաց իմոց, մի՛ անտես առներ զբղխումն արտասուաց իմոց....»: Գրիգոր Նյուսացին ասում է. «Մարդու մտքի գանձարանը պետք է հույսը լինի, նրա մեջ են պահպանվում բոլոր անհրաժեշտությունները մարդու կյանքի համար», այսինքն՝ եթե հույսը կա մարդու մտքի մեջ, ուրեմն՝ ամեն ինչ կա, նա կարող է իր քրիստոնեական կյանքը կազմակերպել: Գրիգոր Աստվածաբանն արձանագրում է. «Ամեն մի բարի նպատակի մեջ թող հույսը ներկա լինի: Այն օգնում է նույնիսկ սաստիկ դժվարությունների ժամանակ»:

Եթե հույս չունես, ապա չես կարող գործ սկսել կամ որևէ բարի նպատակ դնել քո առջև: Առանց հույսի՝ բարի նպատակներդ ուղղակի դատապարտված են տապալվելու: Հույսին անդրադարձել է նաև Հովհաննես Սանդուղքը՝ նշելով. «Հույսը դժվարություններից դուրս գալու բանալի է, սիրո դուռ, այն սպանում է հանձնվելը, այն ապագա բարիքների երաշխիքն է»: Մեզ՝ հայերիս համար ամենակարևոր աղոթագիրքը՝ Ս. Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը ևս հույս է ներշնչում: Նարեկացին իր՝ մարդու մեղքերն է խոստովանում և վերջում վստահաբար կատարելության հասնելու և փրկվելու հույս հայտնում: Բոլոր տների վերջում Նարեկացին ասում է, որ Տերը ամենակարող է, և միայն Նա կարող է բարձրացնել մարդուն ընկած վիճակից:

Կարծում եմ, որ հույսը ենթադրում է դժվարություններ, և հույսի մասին խոսելիս պիտի խոսենք նաև մարդու կյանքի դժվարությունների մասին: Սուրբ Գրքում ամենատառապած կերպարը Հոբն է, տառապանքն ու սուրբգրային այս կերպարը համանիշ են իրար: Հոբը փորձությունների մեջ ամեն ինչ կորցրեց, բայց այնքան ուժեղ էր, որ նույնիսկ դժբախտությունների, իրեն բաժին ընկած անարդար տառապանքների պայմաններում Աստծո հանդեպ հույսը չէր կորցնում և այս օրինակն է բերում. «Ծառի համար իսկ հույս կա, թեև կտրում են, նորից է ծաղկում, և նրա ճյուղերը չեն պակասում» (Հոբ ԺԴ:7): Մի ուրիշ տեղ Հոբը հետևյալ ողբերգական միտքն է արտահայտում. «Մահվանը ինձ հայր կոչեցի, փտությունը՝ ինձ մայր և քույր: Ո՞ւր է հույսն իմ, կամ բարիքներս պիտի տեսնե՞մ» (Հոբ ԺԷ:14–15): Հոբը իր դժվարին կացության մեջ Աստծուց չի խնդրում փրկություն, երջանկություն, իր երեխաներին, ունեցվածքը և այլն: Առաջին բանը, որից տագնապում է, այս է՝ Ո՞ւր է իմ հույսը: Այսինքն, երբ հույսը վերադառնում է մարդուն, մնացած ամեն ինչ հետևանքներ են. մենք Հոբի տառապյալ կերպարից սա ենք սովորում:

Նոր Կտակարանում ևս կան դրվագներ, որտեղ մարդիկ թվացյալ անելանելի իրավիճակում են հայտնվում: Երբ Պողոս առաքյալը գնում է Հռոմ, ճանապարհին նավաբեկության են ենթարկվում: «Գործք առաքելոց»-ում նկարագրվում է, որ նավակի մեջ գտնվող բոլոր մարդիկ հույսը կորցնում են, բայց Պողոսը հավատում է, որ փրկվելու են այդ վիճակից, և ինքը կանգնելու է կայսեր առաջ ու խոսելու: Առաքյալը նավաբեկության ժամանակ մի հետաքրքիր միտք է հայտնում՝ այսպես է եղել, որ մարդիկ հույսը չդնեն իրենց վրա, այլ միայն Աստծո վրա:

Այսպես, Աստվածաշնչում անելանելի իրավիճակներում մարդկանց, մանավանդ սուրբերի հույսը կարմիր գծի նման շարունակվում է, երբեք չի ընդհատվում: Ի վերջո Պողոս առաքյալը հռոմեացիներին ուղղված նամակի մեջ գրել է ոսկեղենիկ այս խոսքերը. «....այլ դեռևս պարծենում ենք նաև մեր նեղությունների մեջ, որովհետև գիտենք, որ նեղությունները համբերություն են բերում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս: Հույսը երբեք չի ամաչեցնում, որովհետև Աստծո սերը սփռված է մեր սրտերում Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ» (Հռոմ. Ե:5–7):

Քրիստոնյայի համար փորձառությունը, համբերությունը և սերը Աստծո նկատմամբ կարևոր են: Դժվարությունները, կարելի է ասել, հավատացյալի համար ուղիղ համեմատական են հույսի հետ, այսինքն՝ ինչքան բարդ իրավիճակներում է հայտնվում քրիստոնյան, այնքան մեծանում է հույսը: Թվում է, թե հակառակը պետք է լինի. ինչքան դժվարությունները, դժբախտությունները շատանում են, հույսը պետք է նվազի: Հակադարձ համեմատական են հույսն ու դժբախտությունը ոչ քրիստոնյայի կյանքում. որքան դժվարությունները շատանում են, այնքան հույսը քչանում է: Մեր ամենօրյա կյանքում շատ ենք լսել «Էլ հույս չունեմ» կամ «Հույսս կտրել եմ» արտահայտությունները: Հավատավոր մարդը, որ Հայ Առաքելական Եկեղեցու միջոցով ամենօրյա շփում ունի Հիսուս Քրիստոսի հետ, հաղորդվում է, երբեք չի հանձնվում: Հույսն իր մեջ ամփոփում, պարունակում է նաև վստահություն և, ինչպես տեսանք նաև մեր սուրբ հայրերի խոսքում, ենթադրում է չհանձնվել:

Հույսի կարևորությունը գիտակցելով է, որ մարդու մկրտության ժամանակ կնքահայրը իր սանիկի համար խնդրում է հավատք, հույս և սեր: Մեր հայրերը խորը գիտակցել են, որ ամենակարևորը այս երեք առաքինություններն են: Պողոս առաքյալը կորնթացիներին ուղղված նամակում ասում է. «Արդ մնում են այս երեքը՝ հավատք, հույս և սեր»: Հույսը խնդրում ենք մկրտվողի համար, որպեսզի ամբողջ կյանքում ուղեկից լինի նրան:

– Տե՛ր Հայր, ինչի՞ պատճառով է առաջանում հուսահատությունը, և արդյո՞ք այն կարելի է մեղք համարել:

– Մարդու կյանքում հուսահատության պատճառ կարող է լինել շատ բան՝ հարազատի մահ, հայրենիքի կորուստ, որևէ այլ ողբերգություն, դժբախտություն, անհաջողություն, բաժանում և այլն: Դրա համար այս հարցին անմիջապես պատասխանել, որ, այո՛, մեղք է հուսահատությունը, դժվար է միանշանակ ասել: Եթե հուսահատված մարդը քեզ մոտ գա, չես կարող ասել, որ մեղք ես գործել: Նույնիսկ հոգեկան և մարմնական առողջություն կորցրած մարդուն չես ասի՝ Դու հիվանդ ես:

Ապաշխարության կարգի ժամանակ ընթերցվող հատվածներում հուսահատությունը մեղք է: Դա հովվական մոտեցման հարց է: Ամեն կիրակի, երբ մարդիկ Պատարագի են գալիս, մենք՝ հոգևորականներս (նաև բոլորը, ովքեր Ս. Հաղորդություն պիտի ստանան), ի շարս այլ մեղքերի հիշատակում ենք հուսահատությունը և ասում՝ Մեղա Աստծո: Եկեղեցական գրականությունը կարդալով՝ կարող ենք ասել, որ հուսահատությունը մեղք է, և Եկեղեցու հայրերը հիմք են ունեցել Աստվածաշունչը: Եթե մարդ հուսահատվում է, ուրեմն՝ Աստծուն չի վստահում: Քրիստոնյան չպիտի պարագայաբար Աստծուն վստահի: Մենք շատ հաճախ հոգևոր իմաստով դժբախտության մեջ ենք, որովհետև շատ այլ բաների վրա ենք հույս դնում՝ ազդեցիկ մարդկանց, գերտերությունների, ունեցվածքի, մեր ծնողների: Մեր հույսը երբեմն ենք դնում Աստծու վրա, բայց այդպես չպետք է լինի, միշտ պետք է մեր հույսը դնենք Աստծու վրա: Եթե հուսահատության մեջ ենք, ապա կասկածում ենք Աստծո ամենակարողությանը: Սուրբ Գրքում Հոբը երբեք հույսը չկորցրեց, միգուցե այն պակասեց, գուցե նա նեղացավ Աստծուց, բայց փնտրում էր հույսը: Հույսը նման է խարսխի, ինչպես նավին է անհրաժեշտ խարիսխ, որ ծովում հաստատուն մնա, այդպես էլ մարդուն է հույսն անհրաժեշտ կյանքում: Ամփոփելով՝ ասենք, որ, այո՛, հուսահատությունը մեղք է, եթե մենք հուսահատվում ենք, անուղղակիորեն կասկածում ենք Աստծո ամենակարողությանը և սիրուն: Վերջապես հաստատված է, որ հուսահատությունը մեղք է, և եթե հակառակը պնդենք, ապա ստիպված պիտի լինենք խմբագրել մեղաները, ինչի իրավունքը չունենք:

– Եկեղեցու հայրերից մի քանիսը նույնիսկ պնդում են, որ հուսահատությունը սատանայի ամենամեծ զենքն է:

– Մեզ համար շատ կարևոր են աստվածաշնչյան հիմնավորումները: Ինչպես ամենասկզբից ասացինք, հույսը Հիսուս Քրիստոսն է, իսկ Սուրբ Գրքում հետաքրքիր մի հատված կա, որտեղ Պողոս առաքյալն ասում է. «....որպէսզի մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածը՝ Հայրը փառքի, ձեզ տայ իմաստութեան եւ յայտնութեան հոգի իրեն ճանաչելու համար: Նա լուսաւոր պիտի դարձնի ձեր սրտի աչքերը, որպէսզի մենք հասկանանք, թէ ինչ է նրա կոչման յոյսը, ինչ է նրա ժառանգութեան փառքի մեծութիւնը սրբերի մէջ» (Եփ. Ա:17–18), այսինքն՝ հույսին Աստված է հրավիրում: Եվ եթե հույսին Աստված է հրավիրում, ապա հուսահատությանը սատանան է հրավիրում: Այս ամենից ելնելով են, կարծում եմ, Եկեղեցու հայրերը հուսահատությունը համարել սատանայի ամենամեծ զենքը: Իհարկե, մարդը պետք է կրթվի, հոգեպես հարստանա, որ այս ամենը հասկանա: Այստեղ կցանկանամ մեջբերել Գրիգոր Նարեկացու խոսքը «Մատյան ողբերգության» աղոթագրքից.

Կամ ինչու ես դու խռովում, սիրտս՝
Մտատանջվելով սատանայական
հուսահատությամբ:
Հուսա՛ Աստծուն և խոստովանի՛ր,
Եվ նա քեզ համար կհոգա անշուշտ՝
Դավթյան սաղմոսի և մարգարեի
կենսախրախույս խոսքի համաձայն... (Բան ԽԴ)

Նարեկացին ևս հուսախաբությունը համարում էր սատանայական:

– Իսկ հուսահատության հետևանքով կարո՞ղ են, տե՛ր հայր, այլ մեղքեր առաջանալ:

– Մենք արդեն փաստեցինք, որ երբ հուսահատվում ես, ուրեմն ինչ-որ իմաստով Աստված չկա արդեն քո կյանքում: Մտածողներից մեկը մի հետաքրքիր խոսք է ասել, որ եթե Աստված չկա, ուրեմն՝ իրեն ամեն ինչ կարելի է: Այսինքն՝ եթե մարդու կյանքում Աստված չկա, նա ընդունակ է ամեն ինչի: Հուսահատված մարդը, կարծում եմ, ամենադժբախտ մարդն է և միևնույն ժամանակ՝ ամենավտանգավոր: Նա կարող է մտածել, որ կորցնելու ոչինչ չունի, և բոլորին վնասել, նույնիսկ՝ ինքն իրեն: Այստեղ կարելի է հիշել դատավորի հանրահայտ խոսքը. «Աստծուց չեմ վախենում, մարդկանցից էլ չեմ ամաչում» (Ղուկ. ԺԸ :4): Հուսահատված մարդը, անշուշտ, ավելի հեշտ մեղքեր կգործի, քան այն մարդը, որ հույս ունի: Մեր հովվական ծառայության ընթացքում հանդիպել ենք մարդկանց, որոնք անբուժելի հիվանդ են եղել և ցանկացել են, որ մյուսներն էլ անբուժելի հիվանդություն ունենան: Այս դեպքում պետք է տվյալ մարդու մեջ առաջին հերթին արթնացնել հույսը:

– Հուսահատությունը հաղթահարելու համար ի՞նչ մեթոդներ եք առաջարկում: Չեզ դիմե՞լ են նման իրավիճակում հայտնված անձինք: Ի՞նչ խորհուրդ կտաք հուսալքված մարդկանց:

– Կարծում եմ՝ որևէ ընդհանուր դեղատոմս չկա: Մոտեցումը պետք է լինի անհատական, որովհետև ամեն հոգի տարբեր ձև է ընկնում հուսահատության գիրկը, ուրեմն՝ մենք չենք կարող ընդհանուր դեղատոմս առաջարկել: Ամեն մեկի հետ պետք է անհատապես զրուցել, հասկանալ՝ ինչ խնդիր ունի: Շատ հետաքրքիր փաստ կա. «հույս» բառը Ավետարաններում գրված չէ: Ինչո՞ւ չկա այս բառը, որովհետև հույսը Հիսուս Քրիստոսն է, որ ներկա է Ավետարաններում:

Հուսահատվածներին խորհուրդ կտամ, որ Քրիստոսին բերեն իրենց կյանք, որ իրենց հետ ապրի, իրենց հոգու և տան մեջ ապրի: Ընդհանուր մոտեցումը սա է, բայց կրկնում եմ՝ անհատապես պետք է մարդու հետ աշխատել: Այս հարցում լավատես եմ, կարծում եմ՝ իսպառ հուսահատված մարդը հոգևորականին չի դիմի, եթե դիմում են, ուրեմն՝ ինչ-որ առումով, գոնե մեկ պտղունց հույս ունեն: Մեզ մոտենում են տարբեր հարցերով, պետք է փորձենք մարդու աչքին բարձրացնել լուսավոր կետը, հույսը ավելացնել, որ նա շարունակի իր կյանքը:

Ի վերջո, հուսալքված մարդուն կարճ խորհուրդ կտամ. «Սպասիր Աստծո խոսքին, որովհետև վերջին խոսքը Աստված է ասում: Դու մի՛ ասա վերջին խոսքդ, դու մի՛ գործիր վերջին արարքդ: Սպասիր Աստծո խոսքին և մի՛ կորցրու վստահությունդ»:

– Շնորհակալություն հարցազրույցի համար:

Հարցազրույցը՝
Գոհար Ղազարյանի

ՆԱԽԷ... ԱՆՄԿԻԶԲ ՈՒ ԱՆՎԵՐՋ, ԱՆՔՆԻՆ ԵՎ ԱՆԸՍՏԳՅՈՒՏ....

Ոսկե հորթը Աստվածաշնչում

Ելից գրքի վերջին հատվածում, որ վերաբերում է Վկայության խորանին և քահանայության հաստատմանը, կենտրոնական տեղ է զբաղեցնում Կի տիսա խումբը: Այստեղ գլխավոր թեման ոսկե հորթի պատմությունն է, որը շատ հրեա մեկնիչներ համարում են հոգևոր մեծագույն ճգնաժամ՝ շատ հաճախ համեմատելով հետախույզների պատմության հետ: Հրեա ժողովուրդը, դուրս գալով Եգիպտոսից և ստանալով Աստվածադիր Օրենքը, փոխանակ այն ամբողջ աշխարհին քարոզելու և սովորեցնելու, հանկարծ անում է այնպիսի բան, որ բացարձակապես հակառակ է Օրենքին: Հետախույզների պարագան ևս զարմանալի է. ժողովուրդը դուրս է գալիս Եգիպտոսից, որպեսզի նվաճի իրեն խոստացված երկիրը, և հանկարծ երկմտում է՝ անե՞լ դա, թե՞ ոչ: Կի տիսա խումբը չունի իր զույգը Ելից գրքում. այն գտնվում է Ղևտականում (Շմինի խումբ-9:1—11:47): Երկուսի դեպքում էլ քահանաները գործում են ինքնուրույն և անում այնպիսի բաներ, որ Մովսեսն իրենց չէր պատվիրել:

Ոսկե հորթի մասին կան տարբեր հիշատակություններ Աստվածաշունչ մատյանում, որոնցից ամենահայտնի օրինակը Ելից գրքի 32-րդ գլխում է: Երկրորդ կարևոր հիշատակությանը հանդիպում ենք Երկրորդումն Օրինաց 9:13—21-ում, որտեղ խոսվում է Իսրայելի ժողովրդի սխալի մասին. չսպասելով Մովսեսին՝ ժողովուրդը ձուլածո կուռք պատրաստեց և սկսեց պաշտել այն: Գ թագավորների գրքի 12-րդ գլխում ևս խոսք կա՝ այս անգամ արդեն ոսկե հորթերի մասին. Հերոբովամը չուզենալով, որ ժողովուրդն այլևս պաշտամունքի գնա Երուսաղեմ, հրամայում է ոսկե երկու հորթ պատրաստել և դրանցից մեկը դնել Դանում, իսկ մյուսը՝ Բեթելում: Ինչպես Ելք 32-րդ գլխում, այստեղ ևս ոսկե հորթերը բնորոշվում են իբրև աստվածներ. *«Բավական է մինչև Երուսաղեմ գնաք: Ահա քո աստվածները, ո՛վ Իսրայել, որոնք քեզ դուրս բերեցին եգիպտացիների երկրից»* (Գ թագ. 12:28): Չորրորդ կարևոր հիշատակությունը Ովսեի մարգարեության մեջ է. Հյուսիսային թագավորությունում տարածված բազմաթիվ մեղքերից մեկը, որ դատապարտում է մարգարեն, կռապաշտությունն է. *«Խորտակի՛ր քո հորթը, Սամարիա՛. իմ բարկությունը բորբոքվեց նրանց դեմ. մինչև ե՞րբ պիտի չկարողանան մաքրվել Իսրայելում»* (Ովսեե 8:5):

Ոսկե հորթին առնչվող այլ փոքրիկ հիշատակություններ ևս առկա են Հին Կտակարանում, որոնց հանդիպում ենք հետևյալ մասերում՝ Դ թագ. 10:31, 17:16, Բ մնաց. 11:13—17, 13:8, Նեեմ. 9:18, Ես. 42:17, Սաղմ. 105 (106):19: Ոսկե հորթին անդրադարձ է կատարվում նաև Նոր Կտակարանում՝ Ստեփանոսի հայտնի ճառում՝ Գործք. 7:39—41:

Ոսկե հորթի պատրաստման ընթացքը

Այսպես, երբ իսրայելացիները տեսան, որ Մովսեսը երկար ժամանակ չի վերադառնում, դիմեցին Ահարոնին՝ աստվածներ ստեղծելու պահանջով, որոնք Մովսեսի փոխարեն իրենց ցույց կտային անապատի ճանապարհը և կհասցնեին Ավետյաց երկիր: Որոշ միդրաշներ Մովսեսի ուշանալու հետ կապված պատմում են այն մեծագույն սխալի մասին, որ թույլ տվեց Իսրայելի ժողովուրդը. Մովսեսը խոստացել էր վերադառնալ 40 օր հետո, և մարդիկ սկսում են հաշվել այն օրից, երբ Մովսեսը բարձրացավ լեռը՝ հաշվի չառնելով այն հանգամանքը, որ նա բարձրացավ ոչ թե առավոտյան, այլ օրվա կեսին, ուստի պետք էր առաջին օրը հաշվել ոչ թե նրա՝ լեռը բարձրանալու օրից, այլ լեռան վրա լինելու պահից, և ահա այդ պատճառով է, որ ասում են, թե Մովսեսի իջնելն ուշացավ: Այս ժողովրդի համար, որը դուրս էր եկել Եգիպտոսից, Մովսեսը կարծես լիներ ամենակարող մի «հերոս», ուստի զարմանալի չէ, երբ Ահարոնին դիմելիս նրանք այսպես են խոսում. *«Վե՛ր կաց և մեզ համար աստվածնե՛ր ստեղծի՛ր, որ առաջնորդեն մեզ, որովհետև չգիտենք, թե ի՞նչ եղավ այն մարդը՝ Մովսեսը, որ մեզ եգիպտոսից դուրս հանեց»* (Ելք 32:1): Հետաքրքրական է այստեղ Ահարոնի արձագանքը, որը, կարծես, միանգամից համաձայնելով ժողովրդի պահանջին, հրամայում է կանանց, տղաների ու աղջիկների ականջներից հանել ոսկե գինդերն ու բերել իր մոտ: Այս կերպ Ահարոնը փորձում է ժամանակ ձգել՝ մտածելով, որ կանանց ու աղջիկներին դժվար կլինի համոզել, որպեսզի նրանք հրաժարվեն իրենց զարդերից: Ահարոնն, ըստ երևույթին, այս քայլով ստիպում է նրանց զգալ նաև իրենց անձնական պատասխանատվությունը այն ամենի մեջ, որ շուտով տեղի է ունենալու:

Նիկոլա Պուսեն, «Ոսկե հորթի պաշտամունքը», 1633—1634 թթ.

Մովսեսը նախքան լեռը բարձրանալը ժողովրդի վրա առաջնորդ էր կարգել Ահարոնին և Ովրին (Ելք. 24:14): Եվ համաձայն որոշ միդրաշների՝ ոսկե հորթի պատրաստման գործընթացը, փաստորեն, չի ընթացել խաղաղ ու հանգիստ ճանապարհով. ժողովուրդն աստվածներ ստեղծելու պահանջով նախևառաջ դիմել է Ովրին և մերժում ստանալով՝ սպանել նրան: Սրա մասին վկայում է նաև այն փաստը, որ պատումից Ովրը անհետանում է. հետագայում նրա մասին որևէ խոսք չկա: Իսկ երբ արդեն մոտենում են Ահարոնին, նա հասկանում է, որ չպետք է վարվի Ովրի պես և ոչ այն բանի համար, որ վախենում է, այլ տեսնում է, որ ժողովուրդն ի վիճակի չէ հասկանալու իր սխալը: Ահարոնը քաջ գիտակցում է, որ չի կարող ճնշել ապստամբությունը, ուստի պետք է փորձի այն կառավարել: Ժամանակ շահելու նրա ծրագիրը, սակայն, այս դեպքում չի աշխատում, ինչը երևում է 3-րդ համարից. *«Ողջ ժողովուրդն իրենց կանանց ականջներից հանեց ոսկե գինդերը և բերեց Ահարոնին»:* Եբր. բնագրում «կանանց» բառը չկա, որից կարող ենք ենթադրել, որ Ահարոնին մոտեցողներն իրենք իրենց ականջներից են հանել այդ զարդերը:

Ոսկե հորթի պատրաստման հետ կապված՝ ուսումնասիրողների կարծիքներն ու առաջ քաշած վարկածները բավականին տարբեր են: Նշենք, որ առաջին հայացքից ակնհայտ հակասություն է առաջանում 32-րդ գլխի 4-րդ և 24-րդ համարների միջև.

4. «Եվ վերցրեց նրանց ձեռքից, կաղապարի մեջ ***ձուլեց և ձուլածո մի հորթ պատրաստեց:*** *Եվ ասացին. «Սրանք են քո Աստվածները, Իսրայե՛լ, որ հանեցին քեզ եգիպտացիների երկրից»»:*

24. «Եվ նրանց ասացի. «Եթե որևէ մեկը ոսկի ունի, նրա վրայից հանե՛ք և բերե՛ք ինձ»: Նրանք ինձ տվեցին ոսկին. ես այն նետեցի կրակը, և ահա ***եղավ այս հորթը»:***

4-րդ համարի համաձայն՝ ոսկե հորթը ստեղծվել է Ահարոնի կողմից, և սա կարծես հաստատվում է 35-րդ համարով, որտեղ կարդում ենք. *«Եվ Տերը ժողովրդին պատուհասեց այն հորթի համար, որ ստեղծել էր Ահարոնը»,* իսկ 24-րդ համարում Ահարոնն արդարանում է Մովսեսի առաջ՝ ասելով, որ դա իր ձեռքի գործը չէ, այլ թե՝ ***«եղավ այս հորթը»****:* Ժամանակակից ուսումնասիրողներն այս հակասությունը բացատրում են հետևյալ կերպ. 32-րդ գլուխը գրված է մի քանի տարբեր հեղինակների կողմից, 4-րդ և 35 համարները գրվել են ավելի վաղ, իսկ 24-րդը՝ ուշ շրջանում՝ նպատակ ունենալով արդարացնել և առավելաբար ցույց տալ այն դժվարին կացությունը, որում հայտնվել էր Ահարոնը: ➥ *էջ 6, 8*

ՈԳԵՂԵՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Խոսքի գեղագիտության դրսևորումները Դերենիկ աբեղա Սահակյանի «Բարևս նամակը կարդացողներին և լսողներին» գրքում

Դերենիկ աբեղա Սահակյանի «Բարևս նամակը կարդացողներին և լսողներին» գիրքը փաստավավերագրական և պատմագեղարվեստական բնույթի ժողովածու է, ուր հեղինակի կողմից նախանձախնդրորեն հավաքագրվել, ամփոփվել, ի մի են բերվել Սահակյան գերդաստանի երկու հերոսներից՝ Հայրենական մեծ պատերազմում զոհված եղբայրներ Աբգար և Սուրեն Սահակյաններից մնացած հուշերն ու հիշատակները: Գլխավոր հերոսներից պահպանված ամեն հուշ-պատառիկ արժևորված է իբրև թանկ մասունք: Գիրքը գրվել է ժամանակների փոշուց հերոսների անձնազոհ անունն ու գործը փրկելու և անկորնչելի դարձնելու միտումով: Այլ կերպ ասած, գիրք մնացորդաց, որով կյանք ու կենդանություն է ներարկվում հերոսներին, վերարդիականացվում այն գաղափարն ու գործը, հանուն որի պայքարեցին ու նահատակվեցին նրանք:

Գրքի գլխավոր հերոսը Աբգար Սահակյանն է՝ Հայրենական պատերազմի եռակի շքանշանակիր: Նախախնամության անվերծանելի զուգադիպությամբ երկու եղբայրները զոհվեցին նույն ամսում. կրտսեր եղբայրը՝ Երևանի պետական բժշկական համալսարանի ուսանող Սուրենը, զոհվեց 1943 թ. ապրիլի 1-ին, իսկ Աբգարը՝ 1945 թ. ապրիլի 11-ին:

Անշուշտ, շատ կարևոր է գրքի հիմնագաղափարը՝ պատերազմի հակամարդկայնությունն ու ողբերգությունը, կյանք արժեցած նվիրումի բարոյական գիտակցությունը, բայց մի կողմ թողնելով գաղափարական շեշտադրումները՝ անդրադառնանք գրքում զետեղված «Հուշահերոսապատում» վիպակի խոսքի գեղարվեստական դրսևորումներին, «Հուշահերոսապատում», որ փաստավավերագրությունից անդին կենդանի գրականություն է՝ ոճական ուշագրավ ճառագայթումներով, գեղարվեստի՝ անհատականություն նշմարող արժեկշռով ու դրոշմանիշով:

«Հուշահերոսապատում»-ը պատմակենսագրական երկ է հայ ոգու մասին, ժամանակների շղթայի մասին, անմահության ճանապարհի մասին: Փոքր տարածության մեջ հեղինակը հասնում է ժամանակաշրջանի պատմական և հոգեբանական ուրվապատկերային ամփոփումների՝ արևմտահայության բռնագաղթ, վերապրողաց կյանք, խորհրդային կոլեկտիվացում, Հայրենական պատերազմի և հետպատերազմյան ընթացք, և այս ամենը գեղարվեստական մակարդակում՝ տեսանելի և ճանաչելի դարձնելով ժամանակի ոգին, հոգեբանությունը, բարքը ավանդույթը, մարդկային ճակատագրերի պատմությունը: Հայր Դերենիկը պահպանել է պատմական նկարագրությունների հավաստիությունը՝ պատերազմական գործողություններն արտապատկերելով պատմանկարագրական ուշագրավ ոճով:

Վիպակը Դերենիկ (Արմեն) Սահակյանի գեղարվեստական առաջին ստեղծագործությունն է, գրական ճանապարհի սկիզբ, որտեղ արդեն տեսանելի են խոստումնալից հունդեր, որ տեղ-տեղ հասունանում ու ծաղկում են՝ դառնալով ապագա ստեղծագործական հասուն ծաղկունքի նախաազդակներ: Այն և՛ պատմական, և՛ գեղարվեստական արժեք ունի, և այս երկու հատկությունները հիմնականում, չհաշված մասնակի դրվագներ, համադրվում են սահուն եղանակով՝ ստեղծելով տարբեր ոճերի համադաշնություն: Պատմականությամբ ու վավերագրերով հեղինակը հիմնավորում է խոսքի գեղարվեստական ընթացքը՝ պատմությունը դարձնելով գեղարվեստի ատաղձ:

Վիպակի խորագրի ենթաբնագրից արդեն իսկ կռահելի է, որ պատումի եղանակներից մեկը վերհուշն է, վերհուշը՝ թախծի ու կարոտի նրբերանգներով, ինչն իր հերթին բանաստեղծականություն, ներքին քնարականություն է հաղորդում խոսքին՝ իբրև զգացմունքային խտացվածության և պատկերավոր մտածողության հետևանք: Ոճը պահ առ պահ հիշեցնում է Բակունցի խոսքի գեղագիտությունը՝ բանաստեղծական արվեստը, խոսքի չափ ու կշիռը, մանրապատկերայնությունը, իսկ զգացմունքային ներքին խտացվածությամբ որոշ դրվագներում հարաբերվում է կարոտի հայ արձակի հոգեկան ալեբախումներին: Ահավասիկ բակունցյան ոճով մի դրվագ. «Մեղրաձորը գտնվում է պար բռնած լեռների գրկում, որոնք իբրև ամրակուռ վահան՝ պատսպարում են գյուղը: Իսկ սարերի ծոցից բխած զույգ գետերն իբրև արծաթյա գոտի եզրագծում են գյուղը....» (26), կամ՝ «Ջրի պես հոսել ու անցել են տարիները, ջրաղացից այսօր մնացել է միայն կոտրված ջրաղացքարը՝ իբրև մագաղաթից պոկված մի թերթ» (31): Համանման պատկերները՝ ներդաշն բանաստեղծականությամբ, ներքին երաժշտականությամբ և ուշագրավ ռիթմով, նպաստում են խոսքի հուզական տպավորության ուժգնությանը:

Վիպակն սկսվում է հերոսների ծննդավայրի պատմական ակունքների, բնաշխարհիկ առանձնահատկությունների նկարագրությամբ, այնուհետև համառոտ ուրվագծվում է նախնիների ծննդաբանությունը: Առաջին իսկ տողերից գիրը կլանում է ընթերցողին, ընկղմում իր մեջ, հոգեբանական թեթև ուղեծրով անկկատ հասցնում վերջին, և դա՝ նախևառաջ գրի մեջ առկա մի ներքին անբացատրելի կենսաուժով:

Քրիստոնեական աշխարհայացքը, սուրբգրային ոճական ներթափանցումը՝ իբրև ինքնակա ստեղծվածքի ներշնչող ներկայություն, զգալի է վիպակում: Ահավասիկ Աբգարի հոր՝ Ալեքսանի կերպարային քանդակումներից մեկը. «Մարդ, ով մինչև կյանքի վերջին շունչը բահը ձեռքին մայր հողի մշակը եղավ՝ իր գործը դարձնելով աղոթք: Թեև Աստծո անունը չկար իր շուրթերին, բայց Աստված կար իր գործերում» (27): Այս դրվագում հեղինակը ասացող է, ոճը՝ պատմողական՝ պատկերավոր երևակայությամբ: Հեղինակը նախևառաջ պատմիչ է, բայց պատմողական ոճի մեջ գեղարվեստական տարրն այնքան է ներգործուն և ինքնակա, որ խոսքը ձեռք է բերում գեղարվեստական մակարդակ: Ահա պատերազմ մեկնողների և հարազատների հրաժեշտի պահի պատկերը՝ խոհահուզական բնորոշ խտացվածքով. «Հունիսի 23-ին Երևանի երկաթուղային կայարանն արդեն լեփ-լեցուն էր, բայց առավել լեցուն էր մարդկային հոգեհույզ զգացողություններով.... Աթեիզմով դաստիարակված մի ողջ ժողովուրդ մեկ օրվա մեջ քրիստոնեության մեծ դարձի օրվա պես նորից դարձ էր կատարել: Կայարանը վերածվել էր մի մեծ աղոթատան՝ անգմբեթ: Բոլորի բերանն օրհնության տաճար էր: Միայն աղոթք էր հնչում և օդի հետ խառնվելով՝ դառնում սաղմոսերգություն, իսկ շոգեքարշի ծուխն էլ կարծես բուրվառից ելնող խնկածուխ լիներ, որ ճանապարհողների աղոթքն էր վերառաքում առ Բարձրյալն Աստված» (42):

➥ *էջ 6*

Խոսքի գեղագիտության դրսևորումները Դերենիկ աբեղա Սահակյանի «Բարևս նամակը կարդացողներին և լսողներին» գրքում

➥ էջ 5

Նկարագրական արվեստի ծիսականությունը ևս քրիստոնեական գեղագիտության դրսևորումներից է, և դա ի հայտ է գալիս նաև հացի արարման պատկերում՝ իբրև սրբամատույց մի ծես. «Ցորենաքաղով սկսվում էր գյուղի աշնան ջրաղացային եռուզեռը: Ցորենի պարկերով բեռնված եզների ճռռացող սայլերն էլ ուղղվում էին դեպի ջրաղաց՝ ալյուրանալու: Գյուղով մեկ լսվում էին ջրաղացի քարերը պտտեցնող շռնդալից ջրի ձայնը և ցորենաղաց քարի արագաչափ զանգակը, իսկ ջրաղացի գլխին ամպի պես կախվում էր ալյուրի ձյունաթույր նուրբ փոշին» (30):

Բնապատկերի և մարդկային հոգեպատկերի համեմատությունները ևս ուշագրավ են վիպակում և ստեղծագործական ինքնատիպ ուղեգիծ են նշմարում: Հայր Դերենիկը բնապատկերի մեջ դնում է մարդկային հոգեբանություն, և հակառակը՝ մարդկային հոգեբանության մեջ՝ բնության հատկանիշներ՝ հասնելով ուշագրավ զուգորդությունների, ինչպես՝ «աշնան տերևի պես թուլացած՝ ծնկները ծալվեցին» (102), կամ՝ «Ալեքսանի երկաթակուռ ձեռքերը նորից բահն առան և տխուր մտորումների մեջ հողի հետ կռիվ տալով՝ նա սկսեց հերկել ու ոռոգել իր հոգու կարոտի պես ճաք տված հողը» (49):

Նկատելի է նաև հոգեբանական և առարկայական պատկերների զուգադրությունը: Ահավասիկ մի օրինակ. «Մեզ կթվա, թե աստղերը վայր են ընկել և փայլում են մեր ոտքերի տակ, սակայն դրանք լուսատիկներն են, որ լուսավորում են գիշերային անցորդի ճամփան» (32), կամ՝ «Ալեքսանի հոգու խռովքը նման էր իր կիսաքանդ բերդին նայող իշխանի», և այս պատկերում ամփոփվում է հոգեկան ցավը, երբ կոլեկտիվացման ընթացքում Ալեքսանից խլում են արդար տքնությամբ վաստակած և հորից ժառանգած հարստությունը՝ մեծ գերդաստանին բաժին թողնելով ընդամենը «իր տնից մի հատված, հողամասից մի փոքր կտոր և ջրաղացը, որն էլ գործեց ընդհատումներով» (33):

Վիպակում գեղարվեստական խոսքի բնորոշ առանձնահատկություններից են նաև պատկերի որոշակիությունը, առարկայականությունը, ինչպես. «Էմման՝ ցրտից սառած, անշարժ կծկվել էր բրդե շալի մեջ: Արցունքի կաթիլները բյուրեղացած իջնում էին աչքերից» (77): Նկարչական տեսանելիությանը փոխլրացնում է գեղարվեստական մեկ այլ հատկանիշ՝ շարժանկարայնությունը: Ահա մի պատկեր, ուր գործողությունների թվարկումը առարկայանում է որպես կենդանի շարժում. «Ալեքսանն ամեն տարվա նման նախապես կարգի էր բերում իր տան մոտ գտնվող ջրաղացը և սպասում ցորենին: Ընտանիքի անդամները և հատկապես զավակները ժամացույցի պես կատարում էին իրենց բաժին գործը. մեկը հետևում էր, որ ջուրը չպակասի, մեկը՝ աղաց քարերի մեջ լցվող ցորենի չափին, իսկ մյուսն էլ արդեն հավաքում էր մանանայի պես քարերի արանքից դուրս շաղվող ալյուրը» (31):

Շարժանկարայնությանը նպաստում և առանձնահատուկ ուշադրություն են գրավում գրի անմիջականությունը և բնականությունը՝ երբեմն անթերի կերպաձևի մեջ,

երբեմն՝ անմշակ ու սովորական: Կենդանի գիրը, պատկերի ոգին փոխլրացնում են անմիջականությանն ու բնականությանը, ինչպես. «Կրակահերթերի միջից լսվում էր Աբգար Սահակյանի հրամանն իր զորքին՝ «Вперёд», և փամփուշտներից էլ արագ՝ զորքն առաջ էր նետվում: Անողորմ կռիվ էր. արյուն ու պայթյուն, ծուխ ու կրակ, զինվորները բզկտված մարմնով արյունաշաղախ ընկնում էին, վերքերից գոռում ու բաց աչքերով զոհվում» (86):

Նկարագրական արվեստին ներքին զորություն է հաղորդում կարևոր երկու հատկանիշ՝ գաղափարականն ու երևակայականը, որոնցով պայմանավորված է վիպակի կենսական ուժը: Հեղինակը, լինելով խորաթափանց և բանաստեղծական ինքնություն, պատկերակերտման արվեստում հասնում է խորքին, հայտնագործում բացառիկը՝ չմիջնորդավորված եղանակով վերակերտելով այն: Ահա հատկանշական մի դրվագ. «Աբգարը, լսելով հարազատ ընկերոջ ձայնը, աչքերը թույլ բացեց և գրկաբաց ձեռքերը փորձեց պարզել դեպի նա: Սակայն վերքերի ցավից ձեռքերն անզորացան: Արամն ինքը ծնկաչոք գրկեց Աբգարին և գլուխը դնելով արյունոտված կրծքին՝ աղաչում էր բժիշկներին, որ շտապ օգնություն ցույց տային: Բայց չարչարված ու տանջված բժիշկները ո՞ր մեկին օգնեին, ո՞ր մեկին փրկեին: Ողջ հոսպիտալը բաց վերքերով պատված զինվորներով էր լցված: Բոլորին էլ շտապ օգնություն էր պետք, և որոնց պետք է հասնեին կամ էլ... Արամն արագարագ սրբիչը թրջում էր և սրբում ընկերոջ հողոտված ճակատից հոսող քրտինքը....» (87):

Պատկերի մեջ տեսանելի և զգալի է դառնում կենդանի պահը: Ահա, օրինակ, պատերազմի չարչարանաց ճանապարհներով չորս երկար ու ձիգ տարիներ անցած, տեսածից ու ապրածից ծերացած, ցավից ծանրացած երիտասարդ Աբգարի հոգեկան պատկերը երկրային ու երկնային կյանքի ճամփաբաժանին: Այդտեղ և՛ հոգնություն կա՝ ինքնայրման աստիճանի, և՛ անհնարին երազանքի վերածված հայրենական կարոտի ու տունդարձի մի վերջին հնարավորություն, և՛ ինքնազսպված ցավի քար հիշողություններից ազատվելու թմրություն. «Չարչարված մարմնից ազատվել էր կամենում կարոտած հոգին: Աբգարը, երբ փակում էր ծանրացած կոպերը, մի պահ կարծես բացվում էր ճամփան տուն վերադարձի: Աբգարի կողքին նստած մյուս ընկերը՝ Սաշան, ամուր բռնել էր նրա ձեռքն ու խոսում էր, սակայն Աբգարն արդեն շատ էր հեռվացել. հոգին երազանքի ճամփին էր, բայց փակ աչքերով պատմում էր ընկերոջը.

— Սաշա, տես, մեր գյուղն է, գարուն է նորից: Ա՜խ, ինչ անուշ են բուրում ծառերը ծաղկած, ա՜խ, մեր սարերի սառը քամին... Ահա երևաց մեր տունը, տես, մեր թոնրատան ծուխն է, մերիկս ինձ համար հիմա լավաշ ու գաթա է թխում, իսկ հայրիկս, ինչպես միշտ, խնձորենու տակ դրված սալ քարին նստած, հիմա ինձ է սպասում....

Աբգարը մի պահ շնչի հետ լռեց և ուժ հավաքելով բացականչեց.

«Մերիկս, ես եկա՛, ես եկա՛...»:

Ընկերը, զգալով մարմնի ցավի պես Աբգարի ցավացող հոգին, բարձր ձայն տվեց.

«Աբգա՛ր, Աբգա՛ր...»:

Ձայնից նորից աչքերը բացեց. հարազատ մարդիկ էին, իր զինվորներն ու ընկերները, բայց օտարության սառը ոգին էր տարածված իր շուրջը» (90—91):

Պատերազմի ողբերգության ցավն ու ներքին անհաշտությունը ներծծված են պատկերների մեջ: Կորստի ցավը, երկարող սպասումի հուսահատությունն ու դառնությունը, կյանքի գեղագիտության ընդհատումը, սիրո չկայացած երջանկությունը, ավերվող, փոշիացվող գյուղերը, քաղաքները, մարդկային ճակատագրերը վիպակում լուռ երկխոսության մեջ են ընթերցողի հետ՝ խոր զգացակցություն փոխանցելով նրան: Հեղինակի հավատարմությունը հերոսների նախատիպին, վիպակի գեղարվեստա-փաստավավերագրական բնույթը, բնականաբար, որոշակի չափով կաշկանդում են ստեղծագործ երևակայության ազատությունը, հերոսների հոգեբանական ներհոսքի խտությունը, ներքին դրամայի, հոգեկան ապրումների խորքային բացահայտումը, պատկերակերտումի ընդարձակումը, բայց պատկերի կառուցման նրբագիծը և դրան համալրող հոգեբանական նրբերանգը հուշում են հեղինակի ստեղծագործ ինքնության և գրական օժտվածության մասին, որ կարող է գեղարվեստական անսովոր հայտածումներ և թռիչքներ արձանագրել արձակի, մեր կարծիքով, մանավանդ բնապատկերային և հոգեբանական փոքր տեսակի արձակի բնագավառում:

Հայր Դերենիկը հոգեբան գրող է, և նրա վիպակի հատկանշական գծերից են պատկերի հոգեբանական տարողությունը, մարդու հոգեկան ապրումների՝ ինքնահաղորդակցման աստիճանի արտահայտումը, խոհահուզական ընդհանրացումները, ինչպես. «Զինվորները վերադարձի կարոտած արահետով տուն եկան հաղթական ոգով ու լայն ժպիտներով, բայց այլևս այլ էր և՛ այդ ժպիտը, և՛ այդ ոգին, քանզի կորստաբեր պատերազմը յուրաքանչյուրի սրտում թողել էր չսպիացող մի բաց վերք: Եվ այդ է պատճառը, որ պատերազմից հետո, թեև հաղթանակած, բայց զինվորների աչքերն անգույն, անփայլ ու թաց են լինում» (98), կամ՝ «Միայն պատերազմում չէ, որ զոհվում են, այլ զոհվում են նաև պատերազմից հետո մարդուս հոգում ու սրտում թողած պատերազմի վերքերից» (104): Ահավասիկ մի այլ դրվագ, որտեղ հոգեբանականին ավելանում է նաև գաղափարականը. «Այո՛, կարևոր է պատերազմի դաշտում գնահատել զինվորի անձնվիրումը, սակայն Աբգարի հայրենասեր ոգուն ու վեհ մարդկային տեսակին ոչ թե շքանշաններն էին, որ պետք է ներշնչեին ավելի լավ կռվելու, այլ՝ պատերազմի վերջնական հաղթանակի հասնելու և այդ հաղթանակի հանդեպ իր ունեցած հավատն ու հաղթանակած տուն վերադարձի հույսը» (82):

Հայր Դերենիկի գրի մեջ առկա են հոգենորոգ լույսը, քրիստոնյա մտածողությունն ու անչար հայացքը: Պատկերային ճառագումները բացառիկ են նկարագրական արվեստի և պատկերի խորքում առկա հոգեբանական շարժման առումով, ինչպես՝ «զինվորի՝ զրահաբաճկոնի պես ծանրացած հոգին» (80), «օր օրի վրա ճաք տվող պատի պես թախիծը երկարում էր, իսկ ցավը կամաց-կամաց խորանում» (76), կամ փոստատարի՝ «սև թուղթը» ծնողներին չհանձնելու, նրանց պահպանելու հոգեբանական պատկերը՝ «աքցանի պես ամուր ճզմեց ձեռքի մեջ պահած թուղթը՝ իբրև թունավոր օձի գլուխ» (67), որդեկարոտ Ոսկի մայրիկի կորստի կսկիծն ու չդադարող սպասումը՝ «Ոսկի մայրիկի աչքերն արցունքի դառնությունից խամրած, սակայն նոր ուժ գտած.....» (104), հոր՝ Ալեքսանի՝ օջախի ծուխը նորից ծխացնելու և որդիների շարունակությունը թոռների մեջ տեսնելու սփոփանքի և վերածնված Սահակյան տան հոգեբանական պատկերը՝ «....Ցավից կարծրացած և քարի պես ամուր կամքով Ալեքսանը 1985 թվականին կյանքի հետ հաշտ՝ փակեց աչքերը: Օջախի ծուխն ավելացավ, կայծակնահար ծառի պես վերքը ներս առած՝ կեղևապատվեց, ծաղկեց ու պտղաբեր դարձավ» (106):

Վիպակի ոճական համակարգի պատկերավորությանը մեծապես նպաստում են ինքնատիպ մակդիրները, համեմատությունները, փոխաբերությունները, անձնավորումը, հակադրությունը, թվարկումը: Ահավասիկ պատկերավորության միջոցների մի քանի կիրարկումներ, որոնց շնորհիվ խոսքը ձեռք է բերում գեղարվեստական բարձր մակարդակ. «չծերացող կարոտ» (105), «կարկուտի պես ռումբերը տեղում էին ողջ քաղաքի վրա» (85), «վշտից սևացած օջախի գույնը կամաց-կամաց սկսեց բացվել և գունավորվել» (100), «քայլերը կամաց-կամաց, հոգու կանչով տանում էին դեպի նեղլիկ մի փողոց՝ լի ընդարձակ հուշերով» (102):

Այսպես, քնարական բռնկումները պատկերակերտման մեջ, հոգեբանական պատկերի միջուկի հայտնաբերումը և անմիջնորդ արտապատկերումը, գրի հստակությունը, բնապատկերի և մարդկային հոգեպատկերի մանրաքանդակայնությունը, պատկերի ներքին շարժումը կամ շարժանկարայնությունը, կյանքի բանաստեղծական ընկալումը, ներթափանցող աչքն ու երևույթի խոր և անսովոր զգացողությունը Դերենիկ աբեղա Սահակյանի ստեղծագործ ինքնության հատկորոշիչներն են:

Նարինե Հովհաննիսյան
բ. գ. թ., դոցենտ

Ոսկե հորթը Աստվածաշնչում

➥ էջ 5

Ինչ է խորհրդանշում այս դեպքում ոսկե հորթը: Առանձնացնենք մի քանի կարևոր կետ:

➢ *Ոսկե հորթը խորհրդանշում է Մովսեսին:* Այս վարկածի հետ կապված՝ ուսումնասիրողները ուշադրություն են հրավիրում հետևյալ հանգամանքների վրա. 1) Մովսեսի ուշանալը՝ ոսկե հորթի պատրաստման պատճառ, 2) Մովսեսի նույնականացումը *«այն մարդու հետ»* (Ելք 32:1), որ հանեց ժողովրդին Եգիպտոսից, 3) հորթի նույնականացումը այն աստվածների հետ, որոնք առաջնորդեցին այդ ժողովրդին (32:4): Վերջին 3-րդ հանգամանքն առնչվում է Ելք 34:29 և 30 համարների թարգմանության հետ. *29. «Մովսեսն իջնում էր Սինա լեռից, և ուխտի երկու տախտակները նրա ձեռքին էին: Լեռից իջնելիս Մովսեսը չգիտեր, որ Տիրոջ հետ խոսելու պատճառով իր* ***երեսը ճառագում է****: 30. Ահարոնն ու Իսրայելի բոլոր որդիները տեսան, որ նրա* ***երեսի գույնը լուսափայլ էր****, և վախեցան մոտենալ նրան»:* Որոշ ուսումնասիրողներ առաջարկում են ընդգծյալ արտահայտումները թարգմանել այլ կերպ՝ ***«նրա դեմքի մաշկը եղջյուրավոր դարձավ»,*** ինչը ևս ենթադրյալ նույնականացում է Մովսեսի և ոսկե հորթի:

➢ *Ոսկե հորթը խորհրդանշում է Աստծուն կամ նախատեսված է Տիրոջ պաշտամունքի համար:* Պտղաբերության և ուժի խորհրդանիշ ցուլի կերպարը, Ք. ա. 2-րդ հազարամյակից սկսած, եղել է բավականին տարածված քանանական մշակույթում: Սովորաբար աստվածները պատկերվում էին ոչ թե ցուլերի կամ հորթերի տեսքով, այլ ունենում էին կենդանու վրա կանգնած մարդու կերպարանք: Օրինակ՝ քանանական պանթեոնի գերագույն աստված Էլը, որին տրված էր «մարդկանց հայր» տիտղոսը (շատ հաճախ նրան անվանում էին նաև ցուլ, ինչը խորհրդնշում էր նրա ուժն ու զորությունը): Ենթադրվում է, որ Ռաս Շամրայից հայտնաբերված ուղղաձիգ սալաքարերից (ստելա) մեկի վրա պատկերված ցլի եղջյուրներով մարդանման կերպարը հենց Էլն է, որն այս դեպքում նստած դիրքում է, չնայած այն բանին, որ սովորաբար պատկերվել է կանգնած մարտիկի տեսքով, որը պատրաստ է հարձակման:

➢ Կանգնած կամ նստած Աստծո գաղափարին հանդիպում ենք նաև Հին Կտակարանում, օրինակ՝ Բ թագ. 22:11-ում կարդում ենք. *«Նա նստեց քերովբեների վրա ու թռավ և երևաց հողմերի թևերի վրա»:* Ուխտի տապանակի հետ կապված որոշ նկարագրություններում ևս հանդիպում ենք նման գաղափարի. *«Ես քեզ կհայտնվեմ այնտեղ և քեզ հետ կխոսեմ Քավության վրայից՝ երկու քերովբեների մեջտեղից, որոնք Ուխտի տապանակի վրա են. ամեն անգամ, երբ ցանկանամ մի հրաման տալ Իսրայելի որդիներին»* (Ելք 25:22): Այս համատեքստում հասկանալի է նաև Գ թագ. 12-րդ գլխում նկարագրվող Հերոբովամի արարքը:

➥ էջ 8

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԸ

Վինսենթ Ուիլլեմ վան Գոգի գեղանկարչության քրիստոնեական խորհրդաբանությունը

Դժվար թե որևէ արվեսագետ ու արվեստասեր հմայված չլինեն Վինսենթ Ուիլլեմ վան Գոգի հազարավոր կտավներով, որոնք նա ստեղծել է մի քանի տարվա ընթացքում՝ խորհրդավոր, տենդագին լարումի մեջ: Իսկ որ նա խորապես կրոնական անձնավորություն է եղել ողջ էությամբ ու հենց դա է պատկերել իր կտավներում, քչերին է հետաքրքրել: “Assist News”-ը մեջբերում է Վինսենթ վան Գոգին՝ որպես արվեստի և Ավետման միջև ամենահետաքրքիր միաձուլումներից մեկի: Շատերը, հավանաբար, տեղյակ չէին, որ նա դեռ մանկուց բուռն կերպով էր սիրում Հիսուս Քրիստոսին, որը և նրան մղել է գնալ հոր հետքերով: Հայրը՝ Դորուս վան Գոգը, հովիվ էր: Հորը հետևելու ու այդպես Աստծուն ճանաչելու մանկական անզուսպ ու անդիմադրելի ձգտումը հասուն Վինսենթի ներքին մղումների ու պատկերացումների համար բավարար չէին: Երիտասարդ Վան Գոգի համար Աստծո թագավորությունը «իր հոր թագավորությունն» էր, ինչն, ըստ ուսումնասիրությունների, հանգեցրել է հոր և որդու հարաբերությունների բարդացմանը: Վան Գոգը տեսնում էր հոր ծառայությունները, թե ինչպես է նա հաճախ երկար ճանապարհ կտրում գիշերները, լապտերը ձեռքին՝ այցելում հիվանդ կամ մահացող մարդուն. նա հորը համարում էր լավ մխիթարիչ, կյանք տվող: Բայց մյուս կողմից ասում էր. «Հայրս չի հասկանում ինձ, ես էլ չեմ կարողանում պատկերացնել նրա Հայրական համակարգը: Այն ինձ ճնշում է, խեղդում է: Ես էլ եմ ընթերցում Աստվածաշունչ, բայց ես տեսնում եմ այլ բաներ, քան հայրս, և ես բացարձակ չեմ գտնում այն, ինչ հայրս է ստանում իր ակադեմիական ձևով.... Ես միշտ մտածում եմ, որ Աստծուն ճանաչելու լավագույն ճանապարհը սիրելու մեջ է. սիրել ընկերոջը, կնոջը, բոլորին, այն ամենը, ինչ քեզ դուր է գալիս, սիրել շատ, իմանալ ավելին: Բայց պետք է սիրել վսեմը, խորը: Ավելի լավը, ավելի խորը, սա է քեզ մոտեցնում Աստծուն»:

Վան Գոգն այսպես էր հասկանում Աստվածաշունչը: Նրա կրոնական հետաքրքրությունն այնքան մեծացավ, որ քարոզիչ դարձավ Բելգիայի ածուխի հանքավայրում՝ գիտակցաբար ընտրելով աղքատության և ցեխի մեջ գտնվող աշխատողների պարզ, ծանր կյանքը՝ լքելով եկեղեցին, որտեղ լսում էր փայլուն աստվածաբանների կիրակնօրյա քարոզները: Սա առաջացրեց ոչ միայն եկեղեցու ղեկավարների, այլև հոր դժգոհությունը: Երկար որոնումներից հետո Վինսենթն ի վերջո դիմեց գեղանկարչությանը՝ պատկերներն ու խորհրդանիշները դարձնելով կրոնական լեզու: Ավելի ուշ նա գրել է, որ ուզում է նկարներով քարոզել: Բայց հոր հետ չկտրեց կապը, փորձում էր ընդհանուր լեզու գտնել, արժանանալ նրա հավանությանը՝ դառնալով իսկատիպ նկարիչ. «Կարծում եմ, եթե հայրս լավ հասկանար արվեստը, ավելի հեշտ կլիներ խոսել նրա հետ»: Թեև Վան Գոգը հեռացավ հովվական ծառայությունից, բայց Աստվածաշունչն ու Ավետարանը նրա կյանքում միշտ մնացել են ոգեշնչման աղբյուր:

Նորի ստեղծման մղումը Վան Գոգը չէր համարում հնի կործանում. նա խոսում է միայն Վերածննդի մասին՝ մշտապես անդրադառնալով Աստվածաշնչին: Ընկերոջը՝ նկարիչ Էմիլ Բեռնարին ուղղված նամակում գրել է. «Միայն Քրիստոսն է հաստատել հավերժական կյանքը՝ որպես ամենակարևոր ճշմարտությունը, ժամանակի անսահմանությունը, հանգստության և նվիրվածության անհրաժեշտությունն ու նպատակը»: Վան Գոգը համոզվեց, որ Աստծուն կարելի է գտնել բնության մեջ, և նրա հասուն նկարներն արտացոլում են բնական աշխարհը գրավելու հմայքը և «վերևում ինչ-որ բանի» հավատը: Դրանցից շատերը կոչվել են աստվածաշնչյան հերոսների կամ դիպաշարերի անուններով, ինչպես՝ *«Բարի Սամարացին», «Սերմնացանը», «Պիետան», «Ղազարոսի հարությունը»*:

Երբ Վան Գոգի հայրն անսպասելիորեն մահացավ 1885 թ., մռայլ նկարիչն սփռոցով ծածկված սեղանի վրա դրեց հայրական ծանր Աստվածաշունչը, կողքին դրեց հանգած մոմն ու մի փոքրիկ գիրք, իսկ հետո նկարեց այդ տեսարանը: Որքան էլ մռայլ լիներ նկարչի տրամադրությունը, նրա նատյուրմորտը կարծես թե պարզ և անմիջական հարգանքի տուրք է իր հորը: Կտավի կենտրոնում հոր Աստվածաշունչն է՝ կողքին հանգած մոմ, իսկ ստորին եզրում՝ առաջամասում, Էմիլ Զոլայի «Կյանքի ուրախությունը» վեպը, որն իր փոքր չափերով ավելի պայծառ է թվում, քան Աստվածաշունչը: Աստվածաշունչը գտնվում է բաց վիճակում՝ Եսայի մարգարեի «Տառապյալ ծառայի երգերից» մեկի վրա: Մեկնաբաններից շատերը ենթադրում են, որ Եսայու կողմից հայտնաբերված հովվական Աստվածաշունչը ներկայացնում է ավանդական, խիստ ապրելակերպը, որը քարոզում էր Եսային, և որին հետևում էր Վինսենթի հայրը, մյուս՝ արդեն մաշված թղթե գիրքը խորհրդանշում է Վինսենթի անձնական, բոհեմական մոտեցումը ժամանակակից կյանքի նկատմամբ:



Վինսենթ վան Գոգ, Նատյուրմորտ՝ բաց Աստվածաշնչով, 1885, Վան Գոգի թանգարան, Ամստերդամ

Վինսենթ վան Գոգ, «Սերմնացանը», 1888, Կյոլլեր-Մյուլլերի թանգարան, Օթերլո

Վինսենթ վան Գոգ, «Սրճարանի գիշերային տեռասը», 1888, Կյոլլեր-Մյուլլերի թանգարան

Վինսենթի համար վիպասանն ու նկարիչը ժամանակակից մարգարեներ են՝ Եսայու նման: Նրանք նույնպես տառապող ծառաներ են, որոնք ձգտում են բուժել իրենց սերնդին մարգարեական խոսքով և պատկերով: Բայց այդ նկարում այլ բան էլ կա. Վինսենթի նատյուրմորտը Աստվածաշնչով բացահայտում է նկարչի անձնական կրոնական փիլիսոփայությունը: Այն ցույց է տալիս, թե ինչպես Վինսենթն ինքը՝ չկայացած քահանան, կերտեց իր նկարները՝ Աստվածաշունչը դրանց միջոցով մեկնաբանելու համար: Հետագայում նա գրել է. «Ինչ մեզ են ասում մեծ նկարիչները, լուրջ վարպետները իրենց գլուխգործոցներում, դա տանում է դեպի Աստված. մեկը գրում կամ վերապատմում է այն գրքում, մյուսը՝ նկարում»:

Վան Գոգը գեղանկարչությունն օգտագործել է որպես իր կրոնական հայացքներն արտահայտելու միջոց: Թարգմանիչ Առնոլդ Պոմերանսը գրել է, որ հարազատների, մասնավորապես եղբոր հետ նամակագրությունը «Վան Գոգի արվեստն ըմբռնելու նոր հնարավորություն է ընձեռում, որը ներկայացնում է հենց ինքը նկարիչը»: Դրանք լույս են սփռում այն բանի վրա, թե ինչպես էր նա իրականացնում կրոնական միտումները, օրինակ՝ հարություն առած Ղազարոսը օժտված է իր դիմագծերով և կարմրավուն մազերով: Նրա հետևում արևն է՝ Քրիստոսի խորհրդանիշը, որը կյանք է տալիս և լույս է պարգևում կյանքին: Ասում են, որ ի տարբերություն այլ նկարիչների՝ Վան Գոգը հրաժարվել էր նկարել Քրիստոսին, քանի որ այդ թեման նրան չափազանց մեծ էր թվում: Փոխարենը նա փորձում է կրոնը փոխանցել բնապատկերի և խորհրդանիշի միջոցով, վառ գույներով և հզոր վրձնահարվածներով:

1990-ականներին արվեստի պատմաբան ճապոնացի Ցուկասա Կոդերան հրատարակել է մի շարք գրքեր, որոնք նվիրված են Վան Գոգի կողմից քրիստոնեական խորհրդանիշների կիրարկմանը: Մասնավորապես հիշատակվում է *«Սերմնացանը»* կտավը, որտեղ Սերմնացանը հիշեցնում է Հիսուսին, Որն Իր առակներում Իրեն սերմնացան էր անվանում: Մյուս կողմից Վան Գոգն իր գործը համեմատում է դաշտերում աշխատող ագարակատիրոջ աշխատանքի հետ: Սերմնացանը նրա համար արտահայտման և նույնականացման արքետիպային՝ նախակերպարային գործիչ է, հավերժական վերադարձի և մշտական նոր սկիզբների երաշխավոր, որի նշանակալից նմանակը բնության մեջ արևն է: Վինսենթը գիտեր և մեջբերում էր Հիսուսի «Սերմնացանի առակը», բայց նրա սերմնացանը Աստծո Որդին չէ, սերմը խոսք չէ, թռչունները դևեր չեն: Այնուամենայնիվ, նկարը միտումնավոր մարմնավորում է անսահմանության ձգտումը, որի խորհրդանիշներն են սերմնացանն ու խուրձը:

Նկարի վերին երրորդը լցված է ոսկով, արևի լույսը բարձրում լցնում է երկինքը, իսկ ներքևում պտտվում է բրոնզե ցորենը: Սերմնացանը քայլում է հերկված հողի վրա, որը կապույտ, կարմիր, շագանակագույն և սպիտակ ծաղիկների ծածկոց է՝ ցրելով դեղին սերմերը, որոնք կարող են լինել արևի լույսի մասնիկներ: Վինսենթի նկարներում, որոնք պատկերում են ցորենի դաշտեր և արևածաղիկներ, արտացոլված են ոսկե սերմեր, որոնցից աճում է ոսկե բերք, իսկ երկիրը լուսավորվում է Երկնային փայլով: Եթե Սերմնացանը սերմանում է սկզբի հույսով, ապա Վան Գոգի հնձողները բերում են վերջը: Հունձքը դարաշրջանի կոնագծային ավարտն է, բայց Վինսենթի հնձվորները միջնադարյան նկարազարդումների մռայլ հնձողները չեն:

«Ցորենի դաշտը հնձվորի հետ» նկարում Վան Գոգի հնձվորը գրեթե անհետանում է դաշտի դեղին հորձանուտում. նա հագած է բաց կանաչ, այլ ոչ թե սև, և նրա դեմքը լիովին տեսանելի է: *«Փոքրիկ հնձվորը և մեծ արևը»* պատկերում հնձվորը մահն է՝ որպես խաղաղություն, որը գալիս է գրեթե ժպտալով: Ամեն մարմին խոտ է, բայց այդ խոտը զարդարված է ավելի մեծ փառքով, քան Սողոմոնի փառքը, և հունձը նեղության պահ չէ, այլ բավարարվածության, երբ հավաքվում են լիովին հասունացած հատիկները:

Վան Գոգը ոչ թե մերժեց գերբնականը, այլ բնականացրեց այն: Նա մեծ նշանակություն է տվել դեղին գույնին. այն կիրառել է որպես լույսի, կյանքի ու Աստծո խորհրդանիշ: Դեղին արևը, որը սովորաբար նկարվում է շրջանագծի մեջ, տարբեր տատանումներով ներթափանցում է Վան Գոգի շատ նկարներ: Դա խորհրդանիշ է, որն իր պայծառությամբ և ձևով մարմնավորում է աստվածային կատարելությունն ու ներկայությունը: «Նա, ով չի հավատում արևին, անաստված է»,— մի անգամ այսպես է արտահայտվել Վան Գոգը:

Այսպիսով՝ յուրաքանչյուր սերմնացան հայտարարում է Աստծո արքայությունը: Վան Գոգը ձգտել է հասնել ինչպես իր անձի, այնպես էլ անհատական գեղագիտության ճանաչմանը: Նկարչի վրձնահարվածների յուրաքանչյուր պատկեր ունի իր խորհուրդը: Նրա «Աստղային գիշեր» կտավում խոյացած բարձրահասակ նոճին ոչ միայն ծառ է, այլև կարևոր խորհրդանիշ: 19-րդ դարում նոճին համարվում էր երկրային աշխարհից այլ աշխարհ անցնելու այլաբանություն: Իզուր չէ, որ այն հաճախ տնկվում է գերեզմանատներում:

Կամ՝ սպիտակ խալաթով մատուցողը՝ սեղանների շուրջ նստած տասնմեկ հյուրերի մեջ: Նրա մեջքի հետևում կա պատուհան՝ խաչով բաժանված չորս մասի, որը մատուցողը կարծես կրում է ուսին, մինչդեռ տասներկուերորդ Սև կերպարանքը դուրս է գալիս դռան միջով: Նկարը կոչվում է *«Վան Գոգի Վերջին ընթրիքը»,* բայց այն ենթադրում է նոր ու շատ բարդ մի բան: Պատկերը հիշեցնում է ինչ-որ տեսարան. ըստ ամերիկացի գրող, լրագրող Դեն Բրաունի տեսության՝ Վինսենթ վան Գոգն իր գլուխգործոցում, հնարավոր է, թաքցրել է Լեոնարդո դա Վինչիի «Վերջին ընթրիքը» (1495—1498): Հետազոտողների կարծիքով՝ դա Վան Գոգի աշխատանքներում թաքնված բազմաթիվ կրոնական խորհրդանիշների գագաթնակետն է: Անկախ հետազոտող Արեդարեդ Բաքսթերն այս թեմայով դասախոսություն է ընթերցել հոլանդական գեղագիտության ասոցիացիայում և կարծում է, որ կոմպոզիցիան ներկայացնում է Հիսուսի, առաքյալների և Հուդայի դիմանկարները: Ըստ Բաքսթերի՝ մոտավորապես այն ժամանակ, երբ Վան Գոգը ստեղծում էր *«Գիշերային սրճարանի տեռասը»,* նա գրեց իր եղբորը՝ Թեոյին՝ վկայակոչելով նկարը և ասելով, որ ինքը «կրոնի հսկայական կարիք ուներ»: Ավելին, Բաքսթերը, որի տեսությանը աջակցում են մի շարք փորձագետներ, այդ թվում՝ արվեստի պատմաբաններ, նշում է. «Նկարում կան մի քանի խաչեր, որոնցից ամենակարևորը ձևավորվում է երկար մազերով Կենտրոնական գործչի վերևում գտնվող պատուհանի ելուստով, որը հագած է սպիտակ: Ո՞վ է կենտրոնում կանգնած ճերմակավորը՝ Հիսո՞ւսը, թե՞ սրճարանի աշխատողը»: Որքան էլ դա անհավանական թվա, Բաքսթերը առաջինը չէ, որ ենթադրում է, թե Վան Գոգի կրոնական համոզմունքները հիմնականում արտացոլվել են նրա ստեղծագործության մեջ:

Սիրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Բ. գ. թ.

Ոսկե հորթը Աստվածաշնչում

⬅ *էջ 5, 6*

Նա հրամայում է ոսկե երկու հորթ պատրաստել և դրանցից մեկը դնել Դանում, մյուսը՝ Բեթելում՝ նպատակ ունենալով ոչ թե սկիզբ դնել մի նոր պաշտամունքի, այլ այս կերպ ստեղծել Ուխտի տապանակի այլընտրանքային խորհրդանիշ՝ նոր տեղ պատրաստելով Տիրոջ ներկայության համար, որպեսզի Աստված խորհրդանշական կերպով նստի Դանում և Բեթելում, ինչպես որ Երուսաղեմի պարագայում էր: Այն, որ հորթի պաշտամունքը տեղի էր ունենում Տիրոջը նվիրված տոնի օրը, վկայում է ոչ թե առաջին, այլ երկրորդ պատվիրանի խախտման մասին:

➢ *Ոսկե հորթը խորհրդանշում է այլ աստվածների:* Առաջարկվող տարբերակներն են՝ էլ, Բահաղ: Էլը ուգարիտական տեքստերում, ինչպես արդեն նշեցինք, շատ հաճախ ներկայանում է ցլի կերպարանքով և համարվում ուժի ու պտղաբերության խորհրդանիշ: Բահաղն իր հերթին պատկերվում է որպես երիտասարդ մարտիկ, որը զինված է մարտական կացնով, և որի սաղավարտի վրա ամրացված են ցլի եղջյուրներ: Հետաքրքրական է, որ Տովբիթի գրքում հանդիպում ենք մի դրվագի, որտեղ Բահաղի կուռքը անվանվում է երինջ. *«Բոլոր ցեղերը, այդ թվում նաև իմ նախահոր Նեփթաղիմի տունը, ապստամբելով Տիրոջ դեմ, սկսեցին զոհ մատուցել երինջին՝ Բահաղի կուռքին»* (Տովբիթ 1:5):

Վերոնշյալ բոլոր կարծիքներն էլ թեև միանշանակ չեն, այդուհանդերձ օգնում են տեքստի հիմնական իմաստն ավելի լավ ընկալելու համար: Ինչ էլ որ լինի, մեկ բան հստակ է՝ ոսկե հորթի պաշտամունքը բացարձակապես հակառակ է ճշմարիտ աստվածպաշտությանը:

Հետագա ընթացքը և դրա ոչնչացումը

Հրեա հայտնի մեկնիչներից Ռաշին 32:4 համարի հետ կապված գրում է. «Եվ չի ասվում թե՝ *«Սրանք են **մեր** աստվածները»*, այլ թե՝ *«Սրանք են **քո** Աստվածները, Իսրայել»*, ուստի պարզ է, որ այն *«խառը բազմությունն»* (Ելք 12:38) էր, որ դուրս գալով Եգիպտոսից հրեաների հետ միասին՝ հավաքվեց Ահարոնի դեմ, պատրաստեց ոսկե հորթը և տարավ իսրայելացիներին մոլորության»: Սրանք իրենց իսրայելացի չեն համարում և այս խոսքով դիմում են հենց հրեաներին:

Ահարոնը տեսավ, որ այլևս անկարող է վերահսկել ժողովրդի մոլորությունը, և նպատակ ունենալով ժամանակ ձգել մինչև Մովսեսի վերադարձը՝ հաջորդ օրը հռչակեց Տիրոջ տոն: Նա զոհասեղան կանգնեցրեց հորթի դիմաց՝ այս կերպ փորձելով առաջնայնությունից զրկել դրան, և հավելեց. *«Վաղը Տիրոջ Տոնն է»* (Ելք 32:5): Հետաքրքրական է, որ եբրայերենում *հորթ* բառը (էգել) նշանակում է շրջան, և հետագայում կտեսնենք, որ տեքստում նշվում է պարելու մասին (32:6, 19, խոսքն այս դեպքում հորթի շուրջը պարելու մասին է), բայց քանի որ շրջանը ինքնին սահմանափակ է, «ոսկե հորթը» ևս սահմանափակելու է ժողովրդին՝ որևէ լավ բանի չտանելով: Բավականին բարդ է կատարվող իրադարձությունների համատեքստում գնահատական տալ Ահարոնի պահվածքին: Այն փաստը, որ նրա անունը հիշատակվում է 5-րդ համարում, խոսում է այն մասին, որ նա ամեն կերպ փորձում է այլափոխել ժողովրդի ուզածը և կատարվածը ծառայեցնել Տիրոջ պաշտամունքի համար: Մյուս կողմից՝ նրա վարքագծի մեջ քիչ նկատելի է վճռականությունը, ինչը հաճախ տանում է որոշակի զիջումների և ի վերջո իրավիճակի նկատմամբ վերահսկողության կորստի: Բայց իրադարձությունների հետագա ընթացքը ցույց է տալիս, որ Ահարոնը չի պատժվում Տիրոջ կողմից. նրա գործողություններն, իրոք, միտված են եղել հեռու պահելու ժողովրդին մեծագույն սխալից, ավելին՝ շուտով նա պիտի դառնա նաև քահանայապետ:

Մովսեսի՝ լեռը բարձրանալուց հետո 40-րդ օրը՝ վաղ առավոտյան, Ահարոնը ողջակեզներ և փրկության զոհեր է մատուցում, իսկ ժողովուրդն սկսում է ուտել, խմել, ապա նաև պարել (Ելք 32:6): 32:8 համարից հասկանալի է դառնում, որ զոհերը մատուցվում էին ոչ թե Տիրոջը, այլ ոսկե հորթին. *«Շուտ շեղվեցին այն ճանապարհից, որ պատվիրեցիր նրանց. իրենց համար ձուլածո հորթ ստեղծեցին և երկրպագում են նրան, զոհեր մատուցում ու ասում. «Սրանք են քո աստվածները, Իսրայել, որ հանեցին քեզ Եգիպտոսից»:* Այն պահին, երբ Օրենքն արդեն պիտի մտներ հրեա ժողովրդի մեջ և դառնար Աստծո ու տվյալ ժողովրդի միության և մշտական կապի միակ երաշխիքը, ժողովուրդն իր սեփական փորձով վերջնականապես հասկանում է մեկ կարևոր բան. նույնիսկ չնչին շեղումը ճշմարիտ աստվածապաշտությունից հանգեցնում է Օրենքի խախտմանն ու դրա մերժմանը:

«Գնա, շտապ իջիր, որովհետև քո ժողովուրդը, որին հանեցիր եգիպտացիների երկրից, անօրինացավ» (Ելք 32:7): Ի՞նչ է նշանակում «քո ժողովուրդ» արտահայտությունը. մի՞թե սա Մովսեսի ժողովուրդն է և ոչ Տիրոջ: Այս կերպ Աստված նախատում է Մովսեսին՝ ակնարկելով այն եգիպտացիներին, որոնց նա թույլ տվեց դուրս գալ հրեա ժողովրդի հետ եգիպտոսից ելքի ժամանակ՝ չնայած այն բանին, որ Տիրոջից չուներ նման կարգադրություն: Աստված մերժում է նրանց՝ որպես իր ժողովուրդ ճանաչելը՝ նրանց մասին խոսելով *«քո ժողովուրդը»* արտահայտությամբ:

Ելք 32:9-ում Աստված ասում է. *«Տեսնում եմ, որ այս ժողովուրդը խստապարանոց է»*: «Խստապարանոց» արտահայտությամբ ժողովուրդը համեմատվում է այն համառ ցլերի հետ, որոնք դժվարությամբ են թողնում, որ իրենց վրա որևէ լուծ դնեն, և ժողովրդի համառությունն այս դեպքում լավագույնս արտահայտվում է այն բանում, որ նույնիսկ եգիպտոսի հանդեպ Աստծո իրականացրած տասը պատիժները տեսնելուց և Կարմիր ծովով անցնելուց հետո էլ նրանք լիարժեքորեն չեն ապավինում ամենակալ Աստծուն: *«Թող որ իմ զայրույթով կոտորեմ նրանց և քեզ մեծ ազգ դարձնեմ»*. այս կերպ Աստված առաջարկում է Մովսեսին դառնալ նոր Աբրահամ կամ երկրորդ Աբրահամ: Հրեա մեկնիչներն ասում են, որ Աստծու այս խոսքերից հետո Մովսեսը հասկացավ, որ միայն իր աղոթքը կարող է փրկել ժողովրդին: Բայց 12—14 համարներում Մովսեսն իր խոսքերով հրաժարվում է նոր Աբրահամ դառնալուց՝ ասելով. *«Մի՛ զայրացիր, հրաժարվի՛ր քո ժողովրդին չարիք պատճառելուց»:* Մովսեսը խնդրում է խնայել ժողովրդին Տիրոջ մեծ անվան համար: Եվ այս խոսքերից հետո միայն Աստված *«մեղմացավ ու նրանց չպատժեց»*: Ստացվում է, որ Տերը փորձում էր Մովսեսին, և նա չգայթակղվեց լինելու այս ազգի նոր հայր՝ նոր Աբրահամ: Դժվարին և վճռական պահերին Մովսեսը մտածում է ոչ թե իր, այլ իր ազգի մասին:

Վկայության տախտակների ջարդելու հետ կապված մեկնությունները տարբեր են, բայց դրանցում կա մեկ ընդհանուր բան. Տիրոջից մեծագույն պարգևն ընդունելու համար անհրաժեշտ է հաղորդ լինել նրա էությանը, և ցանկացած հանցանք, այդ թվում՝ կռապաշտությունը, հանգեցնում է նրան, որ անձը կորցնում է իրականության ընկալման խորությունը և սկսում առաջնորդվել արտաքին ազդակներով: Մովսեսը, լեռից իջնելով, ջարդում է Վկայության երկու տախտակները, այրում հորթը, փոշու վերածում այն ու խառնելով ջրին՝ խմեցնում Իսրայելի որդիներին: Մովսեսը իջնում է լեռից՝ կատարելու մի բան, որն ինքը համարում է անխուսափելի. ամբողջ ազգին փրկելու համար անհրաժեշտ է վերացնել այն դավաճանությունը, որ թույլ տրվեց Աստծո դեմ. *«Երբ Մովսեսը մոտեցավ բանակատեղիին և տեսավ հորթն ու պարողներին, խիստ զայրացավ, նետեց ձեռքում եղած տախտակներն ու դրանք ջարդուփշուր արեց լեռան ստորոտին»* (Ելք 32:19):

Մեկնություններից մեկի համաձայն՝ երբ Մովսեսը տեսնում է ոսկե հորթը, մարմնապես շատ թուլանում է և չկարողանալով այլևս կրել տախտակների ծանրությունը՝ հնարավորինս հեռու է նետում իրենից, որպեսզի դրանք չընկնեն իր ոտքերի վրա. այսպես են անում բոլոր այն մարդիկ, որոնք դեն են նետում իրենց ստանձնած բեռը, որը չափազանց ծանրացել է իրենց ուսերին: Այնքան ժամանակ, քանի դեռ Մովսեսը միայն գիտեր, որ ժողովուրդը կուռք է պատրաստել և երկրպագում է դրան, հույս ուներ, որ կարող է հետ պահել կռապաշտությունից, այդ պատճառով է, որ իր հետ իջեցնում է Վկայության տախտակները, բայց երբ իր աչքերով տեսնում է, թե ինչպես է ժողովուրդը պաշտում հորթին, դրան զոհեր մատուցում և պարում դրա շուրջը, հասկանում է, որ Տիրոջից ստացած օրենքի համար պետք է ստեղծվի նոր ազգ, դրա համար կոտրում է Վկայության տախտակները՝ ցույց տալով, որ ժողովուրդը դեռևս պատրաստ չէ այս Օրենքին և այն գործադրելուն:

Շատ հաճախ մեկնիչները հետևյալ հատվածը՝ *«Եվ վերցնելով նրանց ստեղծած հորթը՝ այրեց կրակով, ապա մանրեց, փոշու վերածեց, փոշին խառնեց ջրին ու խմեցրեց Իսրայելի որդիներին»*, նմանեցնում են Թվեր 5-րդ գլխում ներկայացված պղծության և խանդի մասին հրահանգներին: Կատարվում էր հատուկ կարգ, երբ քահանան երդվեցնում էր կնոջը՝ իր ձեռքում ունենալով նզովքի հանդիմանության ջուրը: Նզովքը պիտի գրի առնվեր և դրվեր ջրի մեջ: Թուղթը տարրալուծվում էր ջրի մեջ, և քահանան այն խմեցնում էր կնոջը. եթե նա դավաճանել էր իր ամուսնուն, ապա նզովքի հանդիմանության ջուրը, մտնելով նրա մեջ, պիտի ուռեցներ նրա որովայնը, քայքայեր զիստերը, և կինը նզովված պիտի լիներ ժողովրդի մեջ (Թվեր 5:27): Իսկ եթե կինը պղծված չէր, ապա պետք է արդարացվեր (Թվեր 5:28): Ամեն ոք, ով մեղավոր էր կռապաշտության մեջ, խմած ջրից պետք է վարակվեր: Մովսեսի արածի իմաստն այն է, որ հստակ քայլով նա ցույց տվեց ժողովրդին, որ նա, ում վրա հույս են դրել և վստահել իրենց անվտանգությունը, պետք է իր գոյությունը դադարեցնի հենց

Միքելանջելո, «Մովսես», 1513—1515 թթ.

իրենց ներսում, և այն փաստը, որ չենք տեսնում, որ որևէ մեկը հրաժարվում է այդ անելուց, արդեն իսկ ապաշխարության առաջին վկայությունն է: Ամենակարևոր բանը, որ պետք է արվեր, սա էր. ցույց տալ կուռքի անէ լինելը՝ առարկայապես ոչնչացնելով այն:

«Մովսեսն ասաց Ահարոնին. «Ի՞նչ է արել քեզ այս ժողովուրդը, որ նրան այդպիսի մեղքի մղեցիր»: Ահարոնի համար, բնականաբար, անհասկանալի է Մովսեսի զայրույթը. «Մի՛ զայրացիր, տե՛ր իմ, որովհետև դու ինքդ էլ գիտես քո ժողովրդի մոլուցքը» (Ելք 32:22): Նա կարծում էր, թե իր արածի մեջ չկա որևէ արտառոց բան, քանի որ կատարվածը փորձել է ծառայեցնել Տիրոջ պաշտամունքին:

Ի վերջո, սակայն, Մովսեսը որոշում է պատժել ապստամբներին, և այս հարցում նրան աջակից են կանգնում Ղևիի բոլոր որդիները: Պատժելով 3000-ին՝ Մովսեսը մաքրում է կռապաշտության մեղքն ազգի վրայից, որովհետև նրանց մեծամասնությունը պարզապես չի գիտակցել և չի հասկացել կատարվածի իմաստը: Եթե Մովսեսը չպատժեր այդ ամենը կազմակերպողներին, կստացվեր, որ մեղավոր են բոլորը, և ազգի գոյությունն ինքնին կվտանգվեր, որովհետև կուռքեր չստեղծելու պատվիրանը (Ելք 20:4) և ստեղծելու դեպքում համապատասխան պատիժն այլևս տրված էին (Ելք 22:19):

32:32 համարում Մովսեսի խոսքերը ցույց են տալիս, որ առանց իր ազգի՝ նա իր ապրելու իմաստը չի տեսնում: Նա խնդրում է իր անունը ջնջել Տիրոջ մատյանից, եթե Աստված չների կատարվածը. «Արդ, եթե ներելու ես նրանց մեղքերը, ների՛ր, իսկ եթե ոչ, ուրեմն իմ անունը ևս ջնջի՛ր քո մատյանից, որի մեջ գրեցիր»:

Այսպես, նկատելի է, որ ոսկե հորթին վերաբերող հրեական մեկնությունները հիմնականում նպատակ ունեն արդարացնելու թե՛ Իսրայելի ժողովրդին և թե՛ շատ դեպքերում Ահարոնին (Ելք 32:24)՝ փորձելով մեղավորությունը բարդել ոչ թե հրեաների, այլ այն ամբոխի վրա, որ դուրս եկավ Եգիպտոսից հրեաների հետ միասին (Ելք 12:38): Սրանով եզրակացնում ենք նաև, որ հրեա ժողովրդի կյանքում ամեն բան լավ է և կանոնակարգված, երբ Մովսեսը և Ահարոնը գործում են միասին: Հասկանում ենք մի շատ կարևոր հանգամանք ևս, որ աստվածպաշտության մեջ գոյություն ունի երկու առաջնային սկզբունք՝ 1. չպետք է շտապել (ժողովուրդը չսպասեց Մովսեսին) և 2. չպետք է ուշանալ (հետախույզների պատմությունը): Աստված է տալիս իրեն պաշտելու ձևերն ու միջոցները, քանի որ մարդիկ չեն կարող դրանք որոշել: Աստծո հետ հանդիպման համար պիտի օգտագործել Իր իսկ տված «աստիճաններն» ու «ճանապարհները». չէ՞ որ սահմանափակը չի կարող որոշել Անսահմանին ծառայելու կերպերը:

Արմենակ ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գագիկ սրկ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՏՕՆՔ ԵՒ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՔ

ՍԵՊՏԵՄԲԵՐ

† Տօն Ծննդեան Սրբուհւոյ Կուսին Մարիամու յԱննայէ — *սեպտեմբեր 8*

† ԽԱՉՎԵՐԱՑ — *սեպտեմբեր 15*

† Սրբոցն Գէորգայ զօրավարին, Ադոկտոսի եւ Ռոմանոսի երգեցողին — *սեպտեմբեր 28*

† Տօն է Վարագայ Սրբոյ Խաչի — *սեպտեմբեր 29*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 1.09.2024 թ.
Տպաքանակը՝ 1265